ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

2025

ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ 2026

ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

France

AMBASSADE DE FRANCE EN ARMÉNIE
Liberté
Égalité
Fraternité

Զեկույցը կազմվել է «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ի կողմից Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության ֆինանսական աջակցությամբ:
Զեկույցի բովանդակության համար պատասխանատու է «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության տեսակետները:

Զեկույցը կազմեց Շուշան Խնկոյանը
Դիտարկեցին Սերգեյ Գաբրիելյանը, Ալինա Միրզոյանը
Ձևավորեց Լևոն Չիլինգարյանը

© «ԴԻԳՆԻԹԻ» Մարդասիրական ՀԿ, 2026 թ. Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Զեկույցը կամ դրանից հատվածներ օգտագործելիս պարտադիր է հղում տալ «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	04
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	05
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	06
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ	07
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԵՐ	08
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	13
ԱՄՓՈՓՈՒՄ	18
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	20
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	22
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՍԿԳԻ ՀԻՄՔՈՎ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐ	22
ՀԱՎԵԼՎԱԾ 2 ԱՅԼ ՀԻՄՔԵՐՈՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՊՔԵՐ	34
ՀԱՎԵԼՎԱԾ 3 ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ	37
ՀԱՎԵԼՎԱԾ 4 ԳԲՏ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ	40
ՀԱՎԵԼՎԱԾ 5 ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ	42

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ
ՀԿ	Հասարակական Կազմակերպություն
ԴԻԳՆԻԹԻ	«Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ
ԼԳԲՏՔԻ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քվիր, ինտերսեքս
ՍԿԳԻ	Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն

ՍԵՌԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ Անձի զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները և/կամ հարաբերությունների ցանկությունը այլ անձի հանդեպ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ Անձի իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան պահին վերագրված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անձի նույնականացմանը՝ որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր:

ՆՈՒՅՆԱՍԵՌԱԿԱՆ Անձ, որը զգացմունքային, հուզական, սեռական և այլ տեսակների գրավչությունների ամբողջություն է դրսևորում նույն սեռի անձանց նկատմամբ:

ՏՐԱՆՍԳԵՆԴԵՐ Անձ, որի գենդերային ինքնությունը չի համընկնում ծննդյան պահին վերագրված սեռին:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Նույն կամ էականորեն նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունք՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքի:

ՀՈՄՈՖՈԲԻԱ Անտրամաբանական և չպատճառաբանված վախ, զզվանք, ատելություն, խտրականություն հոմոսեքսուալ (նույնասեռական) անձանց նկատմամբ կամ հակազդում հոմոսքեսուալ (նույնասեռական) անձանց վարքին և ինքնարտահայտմանը:

ՏՐԱՆՍՖՈԲԻԱ Անտրամաբանական և չպատճառաբանված վախ, զզվանք, ատելություն, խտրականություն տրանսգենդեր անձանց նկատմամբ կամ հակազդում տրանսգենդեր անձանց վարքին և ինքնարտահայտմանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ն («Դիգնիթի») ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում: Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է՝ ելնելով մարդասիրական սկզբունքներից :

«Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ի առաքելությունն է նպաստել ներառական, իրավահավասար հասարակության ձևավորմանը՝ մարդու իրավունքների պաշտպանության, հասանելի առողջապահական ծառայությունների, կարողությունների զարգացման և սոցիալական աջակցության միջոցով:

Մարդու իրավունքների և շահերի պաշտպանության ռազմավարական գործունեության շրջանակներում Կազմակերպությունը իրականացնում է հետևյալը.

- Իրավաբանական և փաստաբանական աջակցություն
- Ռազմավարական դատավարություն
- Օրենսդրական բարեփոխումներին ուղղված աշխատանքներ
- Մշտադիտարկում և փաստաթղթավորում

Սույն զեկույցը ներկայացնում է 2025 թվականի ընթացքում «Դիգնիթի» կազմակերպության կողմից տրամադրված իրավախորհրդատվությունների համառոտագիրը, ինչպես նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության (ՍԿԳԻ) և այլ հիմքերով արձանագրված իրավախախտումների որոշ դեպքերը:

Զեկույցում անդրադարձ է կատարվում նաև առցանց միջավայրում դրսևորվող ատելության խոսքի հիմնական միտումներին:

Զեկույցում ներկայացվում են նաև գործող օրենսդրական կարգավորումների բացերը և դրանց կիրառման ընթացքում ի հայտ եկող խնդիրները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը կազմվել է «Դիգնիթի»-ի կողմից 2025թ-ի ընթացքում

- ☑ **Տրամադրված իրավաբանական խորհրդատվությունների**
- ☑ **Տուժած և այլ շահագրգիռ անձանց դիմումների**
- ☑ **Պետական մարմինների հետ փոխգրությունների**
- ☑ **Ռազմավարական դատավարությունների ընթացքի**
- ☑ **Համացանցում արձանագրված դեպքերի**
- ☑ **Օրենսդրության ուսումնասիրության հիման վրա**

Ներկայացված դեպքերի նկարագրություններում տուժողների տվյալները պաշտպանված են՝ ներկայացված են անանուն կամ փոփոխված՝ նրանց անվտանգությունը ապահովելու և գաղտնիությունը պահպանելու նպատակով:

Զեկույցում ընդգծվել են տարբեր ոլորտներում և խոցելի խմբերի շրջանում արձանագրված իրավախախտումների առավել հատկանշական դեպքերը, որոնց վերլուծությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրության և միջազգային իրավական պարտավորությունների պահանջներին համապատասխան:

Հատուկ ուշադրություն է դարձվել խտրականության ներպետական իրավական կարգավորումների մասին տեղեկությունների հավաքագրմանը և վերլուծությանը, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել իրավակարգավորման առկա բացերի և բարեփոխման անհրաժեշտության մասին:

Վերլուծության հիման վրա զեկույցը ամփոփվել է եզրակացությամբ և ներառում է հիմնախնդիրների լուծմանը ուղղված առաջարկություններ, որոնք նպատակ ունեն աջակցել օրենսդրական բարեփոխումներին, քաղաքականության կատարելագործմանը և առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմների ներդրմանը խոցելի խմբերի համար:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025թ.-ի ընթացքում «Դիգնիթի»-ի կողմից տրամադրվել է

589 իրավաբանական խորհրդատվություն, որոնցից՝



589 իրավաբանական խորհրդատվություններից **139**-ը հանդիսացել է իրավունքի խախտման դեպք, որոնցից **74**-ը՝ ՍԿԳԻ-ի հիմքով:
Արձանագրված իրավախախտման դեպքերից **89**-ով ՀԿ-ի կողմից նախաձեռնվել է համապատասխան գործողություններ:
Նախաձեռնված գործողությունների արդյունքում՝

- **64-ը ունեցել է դրական ելք**
- **23-ը գտնվում է ընթացքի մեջ**

Մնացած դեպքերով գործողություններ չեն նախաձեռնվել տուժողների համաձայնության բացակայության պատճառով:

Ընդհանուր խորհրդատվությունների շրջանակում՝

94 դեպքով աջակցություն է ցուցաբերվել փաստաթղթերի կազմման գործընթացում

113 դեպքով իրականացվել է կապ պետական և մասնավոր կառույցների հետ

2025թ.-ի դրությամբ՝

Ներպետական ատյաններում գտնվող **4 գործ**

Միջազգային ատյաններում քննվող **4 գործ**

2025թ.-ին «Դիգնիթի»-ի, ինչպես նաև տեղական և միջազգային այլ կառույցների հետ համագործակցությամբ զեկույցներ են ներկայացվել նաև միջազգային մի շարք կառույցների:

- ☑ Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
- ☑ Մարդու իրավունքների խախտումների, մոնիտորինգի, հետազոտման և փաստաթղթավորման ոչ կառավարական կազմակերպություն (Human rights watch)[1]
- ☑ ԵՄ-Հայաստան Մարդու իրավունքների երկխոսություն
- ☑ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ
- ☑ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով
- ☑ Համընդհանուր պարբերական դիտարկում (UPR)
- ☑ ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման կոմիտե
- ☑ Այլ

[1] https://dignity.ngo/am/human-rights-watch-hrw-report-on-armenias-human-rights-situation-2025-/

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑԵՐ

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ [2]

Հայաստանի Հանրապետությունը հիմնված է իրավունքի գերակայության սկզբունքի վրա, և Սահմանադրությունը հանդիսանում է երկրի իրավական համակարգի հիմքը, որի բոլոր օրենքներն ու իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: ՀՀ Սահմանադրությամբ երկիրը հռչակվել է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետություն, իսկ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները ամրագրված են որպես գերակայություն:

1995թ. Սահմանադրության ընդունումից հետո իրականացված փոփոխությունները, ուղղված են մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանը և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների համապատասխանեցմանը: Սակայն, չնայած կատարված փոփոխություններին, առկա են որոշ բացեր, որոնք խոչընդոտում են մարդու իրավունքների լիարժեք պաշտպանության ապահովմանը:

Մասնավորապես, *Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված է խտրականության արգելք, սակայն պաշտպանվող հատկանիշների ցանկում բացակայում են սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը, ինչը սահմանափակում է պաշտպանության ամբողջականությունն ու կիրառելիությունը:*

Խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենքի բացակայություն

Խտրականության դեմ պայքարի ոլորտը կարգավորելու նպատակով 2018 թվականին շրջանառության մեջ է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը: Տարիներ շարունակ օրենքի նախագիծը քննարկվել է, քանի որ առկա բացերը շատ են եղել: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2023-2025թթ. գործողությունների ծրագրի համաձայն՝ օրենքի վերջնական նախագիծը պետք է ներկայացվեր Ազգային ժողով մինչև 2024թ. ավարտը, սակայն 2025թ.-ի դրությամբ նախագիծը չի ներկայացվել: 2025թ.-ին վերսկսվել են օրենքի նախագծի քննարկումները, որը ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել նոր՝ «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» **[3]** անվանումով: Սակայն տարեվերջի դրությամբ որևէ էական քայլ չի ձեռնարկվել, և նախագծի վերջնական ընդունումը, ինչպես նաև խտրականության պաշտպանված հիմքերի՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության ընդգրկումը դեռևս սպասողական փուլում է: Համապարփակ կարգավորման բացակայությունը հանգեցնում է միասնական իրավակարգավորումների, խտրականության դեպքերի արդյունավետ քննության և պաշտպանության մասնագիտացված ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայության:

Քրեական օրենսգրքի կարգավորումներ[4]

ՀՀ գործող քրեական օրենսգրքով նախատեսված են պատասխանատվություն խտրականության, ատելություն, խտրականություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք հրահրելուն կամ քարոզելուն ուղղված հրապարակային խոսքի, բռնություն գործադրելու հրապարակային կոչերի, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելու կամ քարոզելու, ինչպես նաև այդ նպատակով նյութեր կամ առարկաներ տարածելու համար: Սակայն համապատասխան հոդվածներում բացակայում է սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հստակ ամրագրումը որպես ատելության կամ խտրականության շարժառիթ:

[2] https://www.arlis.am/hy/acts/75780
[3] https://www.e-draft.am/projects/7408
[4] https://www.arlis.am/hy/acts/221619

Նման բացը գործնականում հանգեցնում է նրան, որ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված իրավախախտումները հաճախ չեն որակվում՝ որպես ատելության շարժառիթով պայմանավորված, ինչի արդյունքում չեն արձանագրվում որպես այդպիսիք, չեն ենթարկվում պատշաճ քննության և չեն արժանանում համարժեք իրավական գնահատականի:
Ավելին, իրավակիրառ պրակտիկայում բացակայում են հստակ չափորոշիչներ և ուղեցույցներ, որոնց հիման վրա իրավապահ մարմինները կարող են նույնականացնել ատելության շարժառիթը նման գործերում: Սա հանգեցնում է պրակտիկայի անհամաչափության և տուժած անձանց իրավունքների պաշտպանության թերի ապահովման:
Վերոնշյալ պայմաններում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով ատելության դրսևորումները հաճախ մնում են թաքնված կամ սխալ որակավորված, ինչը խոչընդոտում է ինչպես կանխարգելման արդյունավետությանը, այնպես էլ արդարադատության իրականացմանը:

Առողջության իրավունք

- Ներպետական կարգավորումներում պահպանված է նույնասեռականության՝ որպես հոգեկան խանգարում, հնացած դասակարգումը[5], ինչը չի համապատասխանում Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված չափանիշներին և ձևավորում է խտրական իրավական միջավայր: Այս մոտեցումը հետևանք է առ այն, որ պետությունը գործնականում ոչ միայն ի զորու չէ ապահովելու նույնասեռական անձանց անվտանգությունը պարտադիր զինվորական ծառայության ընթացքում, այլ ցուցաբերում է տարբերակված և խտրական մոտեցում: Արդյունքում, անձինք պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում են[6] ոչ թե անհատական առողջական գնահատման, այլ նրանց անվտանգության անապահով լինելու կանխավարկածով: Բացի այդ՝ զինվորական ծառայության ընթացքում արձանագրված ճնշումների և նվաստացուցիչ վերաբերմունքի դեպքերը վկայում են ոչ անվտանգ միջավայրի մասին: Զորակոչի գործընթացում ՍԿԳԻ հիմքով ծառայությունից ազատման դեպքերում համապատասխան տեղեկատվությունը արտացոլվում է ՀՀ-ում գործող պարտադիր էլեկտրոնային առողջապահական տեղեկատվական համակարգում («Արմեդ»), ինչը հանգեցնում է զգայուն անձնական տվյալների հասանելիության և գաղտնիության խախտման ռիսկերի:Անձի հոգեբուժական հաշվառման հետևանքով առաջանում են օրենսդրական սահմանափակումներ, որոնց արդյունքում անձինք փաստացի չեն կարողանում իրականացնել աշխատանքի ընդունվելու կամ կրթություն ստանալու իրենց իրավունքները, ինչը հանգեցնում է խտրականության և իրավահավասարության սկզբունքի խախտման:

- ՀՀ իրավական դաշտում բացակայում են գենդերային ինքնության ճանաչման և իրավական կարգավորման հստակ մեխանիզմները, ներառյալ գենդերային անցման բժշկական ընթացակարգերը և իրավական սեռի փոփոխության գործընթացը, ինչը սահմանափակում է տրանսգենդեր և գենդերային բազմազան անձանց անձնական ինքնության ճանաչումը և հավասար իրավունքների իրացումը:

[5] ՀՀ-ում կիրառվող ՀՄԴ-10-ը տեղայնացված չէ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից ընդունված տարբերակին համապատասխան:
[6] https://www.arlis.am/hy/acts/218807

Աշխատանքային օրենսգրքի կարգավորումներ

- ՀՀ աշխատանքային օրենսգրքով ամրագրված է աշխատանքի հավասարության և խտրականության արգելքի ընդհանուր սկզբունքը (հոդված 3[1]), սակայն սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ներառված չեն որպես պաշտպանված հիմքեր: Օրենսգրքում կիրառվող «այլ հանգամանքներ» ձևակերպումը չունի բավարար իրավական որոշակիություն, ինչի արդյունքում ՍԿԳԻ հիմքով խտրականության դեպքերը հաճախ դուրս են մնում արդյունավետ իրավական պաշտպանության շրջանակից: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են նաև աշխատողների իրավունքների պաշտպանության մեխանիզմներ (դատարան դիմելու իրավունք, տեսչական մարմին), սակայն խտրականության ապացուցման բարդությունը և ՍԿԳԻ-ի որպես պաշտպանված հիմքի բացակայությունը սահմանափակում են դրանց արդյունավետ կիրառումը:
- Ներպետական իրավակարգավորումներում նույնասեռականությունը որպես հոգեկան խանգարում դասակարգելու հետևանքով՝ զինվորական ծառայության հետ կապված գործընթացներում անձանց կողմից իրենց սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը բացահայտելու կամ բացահայտվելու դեպքերում նրանք հաշվառվում են հոգեկան առողջության կենտրոնում: Նման հաշվառման փաստը առաջացնում է իրավական հետևանքներ, որոնք արտահայտվում են աշխատանքի որոշ տեսակների նկատմամբ հասանելիության սահմանափակմամբ՝ այն դեպքերում, երբ օրենսդրությամբ կամ գործատուի պահանջով նախատեսվում է հոգեկան առողջության կենտրոնում հաշվառված չլինելու վերաբերյալ տեղեկանքի ներկայացում: Վերոնշյալ կարգավորումների և դրանց կիրառման արդյունքում ձևավորվում է ՍԿԳԻ հիմքով տարբերակված մոտեցում, որը չունի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում աշխատանքային գործառույթների կատարման տեսանկյունից և, հետևաբար, հակասում է ՀՀ Սահմանադրությամբ և աշխատանքային օրենսդրությամբ ամրագրված հավասարության և խտրականության արգելքի սկզբունքներին:

Սեռական ծառայություններին առնչվող օրենսդրական կարգավորումներ

ՀՀ-ում սեռական ծառայությունների մատուցումը[7] քրեորեն պատժելի արարք չի համարվում, այլ որակավորվում է որպես զանցանք[8] և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 179[1] հոդվածով նախատեսվում է վարչական պատասխանատվություն:

Ի տարբերություն նախորդ քրեական օրենսգրքի՝ ՀՀ նոր գործող քրեական օրենսգիրքը, որն ուժի մեջ է մտել 2022թ-ի հուլիսի 1-ից, սահմանում է սեքս աշխատանքի հասկացությունը[9]: Օրենսգրքով պատասխանատվություն է նախատեսված անձին սեքս աշխատանքին հարկադրելու (հոդված 135), կավատության (հոդված 298) և սեքս աշխատանքով զբաղվելուն նպաստելու (հոդված 299) համար:

Այսպիսով, գործող կարգավորումները ոչ միայն չեն նպաստում սեքս աշխատանքով զբաղվող անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, այլև գործնականում խորացնում են նրանց խոցելիությունը և սոցիալական մարգինալացումը:

[7] *Հաշվի առնելով, որ ներպետական օրենսդրությունը լի է խտրական տերմիններով՝ օրինակ՝ մարմնավաճառ, պոռնկություն և այլն, ուստի սույն զեկույցում դրանք փոխարինվել են ընդունելի և ոչ խտրական տերմինաբանությամբ, օրինակ սեռական ծառայություն մատուցող, սեքս աշխատանք:*

[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=164913

[9]https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=165138

Ընտանեկան բռնության մասին օրենսդրական կարգավորումներ

Նույնասեռական զույգերի ամուսնության արգելքի սահմանադրական կարգավորումը հանգեցնում է նրան, որ «Ընտանեկան բռնության կանխարգելման, ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում[10] բացակայում են նույնասեռական զույգերի միջև բռնության դեպքերի կարգավորման հստակ մեխանիզմներ, ինչը էականորեն սահմանափակում է տուժած անձանց պաշտպանության արդյունավետությունը:

Վերոնշյալ օրենքով ոստիկանությանը վերապահված է բռնության վերաբերյալ յուրաքանչյուր ահազանգի անհապաղ և արդյունավետ արձագանքման պարտականություն: Սակայն գործնականում արձագանքումը հաճախ ուշանում է կամ իրականացվում է ոչ լիարժեք՝ առանց համարժեք գնահատելու բռնության ենթարկված անձի տարիքային, սոցիալական վիճակը, սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը: Այս մոտեցումը հատկապես բացասական հետևանքներ է ունենում խոցելի խմբերի համար, քանի որ անհատական առանձնահատկությունների անտեսումը հանգեցնում է վտանգի սխալ գնահատման, պաշտպանության միջոցների չկիրառման կամ ձևական կիրառման: Արդյունքում, բռնության ենթարկված անձինք մնում են առանց արդյունավետ պաշտպանության, իսկ բռնության շարունակման ռիսկը՝ չեզոքացված չէ, ինչը հակասում է պետության կողմից ստանձնած կանխարգելիչ և պաշտպանական պարտավորություններին:

[10] https://www.arlis.am/hy/acts/221080

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Խտրականության ընդհանուր պատկեր և բազմակի խտրականություն

2025 թվականին արձանագրված դեպքերը ցույց են տալիս խտրականության համակարգային բնույթը՝ հիմնված հատկապես սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա, ինչպես նաև ՄԻԱՎ դրական կարգավիճակ ունենալու, միգրանտ կամ փախստական լինելու, ազատազրկված անձի կարգավիճակի, սեռական ծառայություններ մատուցելու և այլ սոցիալական հիմքերի վրա: Արձանագրվել են նաև բազմակի խտրականության դեպքեր, երբ անհավասար վերաբերմունքը պայմանավորված է եղել միաժամանակ մի քանի հիմքերով, օրինակ՝ սեռական կողմնորոշման, ՄԻԱՎ դրական և այլ անձնական կամ սոցիալական կարգավիճակի համադրությամբ:

Իրավապահ համակարգ և արդարադատության հասանելիություն

Դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավախախտումների զգալի մասը տեղի է ունեցել իրավապահ մարմինների ներգրավմամբ կամ նրանց կողմից իրականացվող գործառույթների շրջանակում, ինչը կասկածի տակ է դնում արդյունավետ և անխտրական պաշտպանության ապահովումը: Այլ կերպ՝ հաճախ արձանագրվում են կրկնակի խտրականության՝ վիկտիմիզացիայի դրսևորումներ, երբ տուժողները բախվում են ոչ միայն բռնությանը, այլև ոչ պատշաճ վերաբերմունքին իրավապահ մարմինների կողմից:

Արձանագրված դեպքերով նկատվում են հետևյալ խնդիրները՝

- իրավապահ մարմինների արձագանքի ուշացում կամ ոչ լիարժեքություն,
- դեպքերի ոչ պատշաճ փաստաթղթավորում և իրավական գնահատման թերություններ,
- պաշտպանության միջոցների ոչ արդյունավետ կամ ձևական կիրառում,
- տուժողների նկատմամբ խոցելիության և անհատական հանգամանքների ոչ պատշաճ հաշվառում,
- որոշ դեպքերում՝ խտրական կամ կանխակալ վերաբերմունքի դրսևորումներ,
- իրավապահ մարմինների կողմից հետապնդում խոցելի խմբերի անձանց և նրանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների նկատմամբ:

Նշված խնդիրները հանգեցնում են նրան, որ տուժողները հաճախ չեն դիմում իրավական պաշտպանության միջոցների՝ պայմանավորված իրավապահ համակարգի նկատմամբ ձևավորված անվստահությամբ: Արդյունքում խտրականության և բռնության դեպքերը չեն ստանում պատշաճ իրավական արձագանք, իսկ պատասխանատու անձինք հաճախ խուսափում են պատասխանատվությունից՝ ձևավորելով անպատժելիության միջավայր:

Ընտանեկան բռնություն և պաշտպանության մեխանիզմներ

Ընտանեկան բռնության ոլորտում արձանագրվել են դեպքեր, երբ բռնությունը դրսևորվել է ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ իրենց ընտանիքի անդամների կողմից՝ ստեղծելով լրացուցիչ խոցելիություն տուժողների համար և սահմանափակելով նրանց կողմից պաշտպանության և իրավական միջոցների արդյունավետ կիրառման հնարավորությունը: Արձանագրված դեպքերով

Ընտանեկան բռնության շրջանակներում արձանագրվել են դեպքեր, որոնք ներառել են

- հոգեբանական բռնություն՝ վիրավորանքների, սպառնալիքների և ճնշման դրսևորումներով,
- ֆիզիկական բռնության դեպքեր՝ մարմնական վնասվածքների կամ ֆիզիկական ուժի կիրառման ձևով,
- տեղաշարժի սահմանափակում՝ ներառյալ անձի ազատ տեղաշարժի վերահսկում կամ արգելք ընտանիքի անդամների կողմից,
- ընտանիքի կողմից տնից դուրս հանելու կամ բնակության հնարավորությունից զրկելուդեպքեր,
- Ոստիկանության կողմից դեպքերին ոչ պատշաճ արձագանք:

Առողջապահական համակարգ

Դեպքերի վերլուծությունը վկայում է, որ առողջապահական ոլորտում առկա են համակարգային խնդիրներ, որոնք նպաստում են խտրականության ձևավորմանը և խոչընդոտում խոցելի խմբերի համար բժշկական օգնության հավասար հասանելիությանը: Մասնավորապես՝

- խտրական վերաբերմունք բժշկական անձնակազմի կողմից,
- բժշկական գաղտնիքի խախտման դեպքեր,
- բուժօգնության տրամադրման մերժում կամ ձգձգում,
- առողջապահական ծառայություններից օգտվելու վախ և խուսափում,
- տրանս անձանց համար գենդերի անցման բժշկական միջամտությունների հասանելիության և կարգավորման բացակայություն:

Նշված խնդիրները հանգեցնում են առողջապահական ծառայությունների հասանելիության նվազմանը, տուժողների կողմից բուժօգնության չդիմելուն և հանրային առողջության համար լրացուցիչ ռիսկերի առաջացմանը:

Աշխատանքային հարաբերություններ

Հավաքագրված տվյալները վկայում են, որ աշխատանքային ոլորտում առկա են համակարգային խտրականության և սոցիալական խոցելիության բարձր մակարդակ, որոնք հատկապես ազդում են ԼԳԲՏՔԻ անձանց վրա՝ սահմանափակելով նրանց աշխատանքի հավասար հնարավորությունները և անվտանգ աշխատանքային միջավայրի ապահովումը:
Առկա են հետևյալ խնդիրները՝

- աշխատանքի ընդունման գործընթացում խտրական վերաբերմունք և աշխատանքի չընդունում՝ սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության ենթադրյալիիմքով,
- փորձաշրջանի պայմաններում շահագործման ռիսկեր, ներառյալ՝ առանց վարձատրության կամ նվազագույն սոցիալական երաշխիքների աշխատանք,
- աշխատանքից ազատման կամ աշխատանքային պայմանների վատթարացման դեպքեր՝ անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության բացահայտման հետևանքով,
- աշխատանքային պայմանագրերի բացակայություն կամ ոչ պատշաճ ձևակերպում,
- աշխատավայրում խտրական և վիրավորական միջավայրի ձևավորում՝ ներառյալ պիտակավորում և հոգեբանական ճնշում,
- աշխատողների կողմից իրավական պաշտպանության մեխանիզմներին դիմելու վախ՝ պայմանավորված հնարավոր բացահայտման և կրկնակի խտրականության ռիսկով:

Նշված խնդիրները հանգեցնում են աշխատանքի շուկայում անհավասար մասնակցության, ոչ ֆորմալ զբաղվածության աճի և սոցիալական պաշտպանության մեխանիզմներից դուրս մնալու ռիսկերի ավելացման:

Զորակոչ և զինվորական ծառայություն[11]

Վերլուծությունը ցույց է տալիս, որ զինվորական ծառայության և զորակոչի գործընթացներում առկա են համակարգային խնդիրներ, որոնք կարող են հանգեցնել խտրական վերաբերմունքի, անձնական տվյալների ոչ պատշաճ օգտագործման և ծառայության կազմակերպման ոչ հավասար պայմանների:
Մասնավորապես՝

- զորակոչի և զինվորական հաշվառման գործընթացներում խտրական վերաբերմունք և պիտակավորող մոտեցումներ՝ կապված սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հետ,
- զինկոմիսարիատների և բժշկական հանձնաժողովների կողմից անձնական և բժշկական գաղտնիք համարվող տվյալների տարածում,
- բժշկական փորձաքննության գործընթացում մասնագիտական և էթիկական մոտեցումների ոչ միասնական կիրառում,
- ծառայության ընթացքում կամ նախազորակոչային փուլում հոգեբանական ճնշման և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումներ:

Սեռական ծառայություններ

Ուսումնասիրությունը և դեպքերը ցույց են տալիս, որ սեռական ծառայություններ մատուցող անձինք գտնվում են առավել խոցելի իրավիճակում՝ պայմանավորված գործող իրավական կարգավորումներով:
Արձանագրված դեպքերով նկատվում են հետևյալ խնդիրները՝

- բռնության և շահագործման դեպքեր,
- վարչական պատասխանատվության վախի պատճառով իրավապահ մարմիններին դիմելության խնդիրներ,
- տուժողի կարգավիճակ ստանալու փոխարեն պատասխանատվության ենթարկվելու դեպքեր:

Նշված հանգամանքները հանգեցնում են նրան, որ սեռական ծառայություններ մատուցող անձինք գործնականում զրկվում են արդյունավետ պաշտպանությունից, իսկ բռնության դեպքերը մնում են չբացահայտված:

Ատելության խոսք և առցանց միջավայր

Անհավասար վերաբերմունքի դրսևորումները տարածվում են նաև առցանց միջավայրում: 2025 թվականին սոցիալական ցանցերն ու լրատվական հարթակները շարունակել են ծառայել որպես ատելության խոսքի տարածման հիմնական հարթակներ,
Արձանագրվել են հետևյալ միտումները՝

- ԼԳԲՏՔԻ անձանց թիրախավորում սոցիալական ցանցերում,
- վիրավորական և արժանապատվությունը նվաստացնող արտահայտությունների տարածում,
- ԼԳԲՏՔԻ անձանց ներառում քաղաքական կամ կրոնական դիսկուրսներում՝ որպես բացասական պիտակ կամ մանիպուլյացիայի գործիք,
- ատելության և թշնամանքի հրահրում,
- Նշված երևույթները նպաստում են անհանդուրժողականության խորացմանը և կարող են հանգեցնել նաև իրական կյանքում բռնության դրսևորումների:

[11] ՊՆ-ի կողմից ստացած պատասխան գրությանը կարող եք ծանոթանալ **Հավելված 6-ում**

Փակ հաստատություններ (քրեակատարողական հիմնարկներ)

Փակ հաստատություններում, մասնավորապես քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ), ԳԲՏ անձանց իրավիճակը շարունակում է մտահոգիչ մնալ:
Վերջիններիս նկատմամբ դրսևորվում է տարբերակված վերաբերմունք, մասնավորապես՝

- խտրական վերաբերմունք և մեկուսացում,
- նվաստացուցիչ վերաբերմունք և ճնշումներ,
- անվտանգության բավարար երաշխիքների բացակայություն,
- քրեական ենթամշակույթի ազդեցությամբ ստորացուցիչ համարվող և անվճար աշխատանքների իրականացում,
- սննդի տրամադրման առանձնացում և անհավասար պայմաններ,
- քրեական ենթամշակույթի ազդեցության հետևանքով անձանց նկատմամբ անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք :

Նշված պայմանները հանգեցնում են տուժողների իրավունքների շարունակական խախտման և չեն համապատասխանում միջազգային մարդու իրավունքների չափանիշներին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Վերլուծելով 2025 թվականի դեպքերը՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում խտրականության և բռնության դեմ պայքարն առնվազն երեք մակարդակում թերանում է.

Օրենսդրական մակարդակում

բացակայում են համապարփակ և արդյունավետ հակախտրական մեխանիզմներ: Գործող իրավակարգավորումները չեն ապահովում հստակ և հավասար պաշտպանություն սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, ինչպես նաև սոցիալական կարգավիճակի հիմքով խտրականությունից, ինչի արդյունքում տուժող անձինք հաճախ զրկվում են արդյունավետ իրավական պաշտպանության հնարավորությունից:

Քաղաքական մակարդակում

նկատվում է բավարար քաղաքական կամքի պակաս՝ ուղղված առկա օրենսդրական բացերի հաղթահարմանը և միջազգային չափանիշներին համապատասխանող կարգավորումների ներդրմանը: Սա դրսևորվում է ինչպես համապատասխան օրենսդրական նախաձեռնությունների բացակայությամբ, այնպես էլ առկա խնդիրների նկատմամբ համակարգային արձագանքի սահմանափակությամբ:

Հասարակական և մշակութային մակարդակում

շարունակում են պահպանվել անհանդուրժողականության, խտրական վերաբերմունքի և ատելության խոսքի բարձր ցուցանիշներ: Այս միջավայրը պայմանավորված է ոչ միայն հանրային դիսկուրսում առկա բացասական խոսույթով, այլև խորապես արմատավորված հասարակական կարծրատիպերով, որոնք ձևավորում և վերարտադրում են խտրական վերաբերմունք տարբեր խմբերի նկատմամբ: Միևնույն ժամանակ, նման մոտեցումները հաճախ սնուցվում և խրախուսվում են որոշ քաղաքական և կրոնական դերակատարների հրապարակային ելույթներով և հանրային քննարկումներով, ինչը նպաստում է խտրականության և բռնության հանդեպ հանդուրժողականության պահպանմանը և վերարտադրմանը:

Արդյունքում՝ ԼԳԲՏՔԻ անձինք, սեռական ծառայություն մատուցողները և այլ խոցելի խմբեր շարունակում են հայտնվել բարձր ռիսկային և պաշտպանվածությունից զրկված դիրքերում:
Նման իրավիճակն ընդգծում է անհրաժեշտությունը ոչ միայն օրենսդրական բարեփոխումների, այլև հասարակության շրջանում մարդու իրավունքների, հավասարության և անհանդուրժողականությունից զերծ միջավայրի խթանման համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ

- ☑ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածում որպես խտրականության արգելված հիմք ամրագրել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը
- ☑ Ընդունել «Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» ՀՀ օրենքը՝ պաշտպանված հատկանիշների ցանկում ներառելով սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը
- ☑ ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ, 329-րդ և 330-րդ հոդվածներում սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը համապատասխանաբար ներառել որպես խտրականության, ատելության խոսքի և բռնության կոչերի շարժառիթ
- ☑ Համապատասխանեցնել ներպետական հիվանդությունների դասակարգման համակարգը ՀՄԴ-11 միջազգային չափանիշներին
- ☑ Բացառել ՍԿԳԻ վերաբերյալ տվյալների արտացոլումը էլեկտրոնային առողջապահական տեղեկատվական համակարգերում («Արմեդ»)
- ☑ Ընդունել «Գենդերի իրավական ճանաչման/նշման փոփոխության մասին» օրենք՝ ապահովելու գենդերի իրավական ճանաչման, ներառյալ գենդերի անցման միջամտությունների հստակ և մատչելի ընթացակարգեր
- ☑ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1 հոդվածում որպես խտրականության արգելված հիմք ներառել սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը
- ☑ Ապավարչականացնել սեռական ծառայությունների մատուցումը և ապաքրեականացնել քրեական օրենսգրքի հոդվածները և կատարել համապատասխան փոփոխություններ ՀՀ վարչական և քրեական օրենսգրքերում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ

- ☑ Ապահովել իրավապահ, զինվորական, առողջապահական, սոցիալական և քրեակատարողական համակարգերի և այլ պետական կառույցների աշխատակիցների պարտադիր և շարունակական վերապատրաստում ՍԿԳԻ հիմքով խտրականության կանխարգելման և մարդու իրավունքների ոլորտում
- ☑ Ներդնել հստակ վերահսկողության և հաշվետվողականության մեխանիզմներ պետական համակարգերում ՍԿԳԻ հիմքով խտրական պրակտիկաների կանխման համար
- ☑ Ապահովել ընտանեկան բռնության դեպքերին արձագանքող իրավապահ մարմինների կողմից օրենսդրության դրույթների լիարժեք և արդյունավետ կիրառում
- ☑ Իրականացնել հանրային իրազեկվածության բարձրացման ծրագրեր՝ ուղղված ՍԿԳԻ հիմքով խտրականության նվազեցմանը և սոցիալական հանդուրժողականության բարձրացմանը
- ☑ Ուժեղացնել տվյալների պաշտպանության վերահսկողությունը պետական տեղեկատվական համակարգերում, մասնավորապես առողջապահական և զինվորական ոլորտներում:

ՍԿԳԻ ՀԻՄՔՈՎ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐ

Ստորև ներկայացված են 2025թ.-ի ընթացքում «Դիգնիթի»-ի կողմից արձանագրած ՍԿԳԻ հիմքով իրավախախտման առավել հատկանշական դեպքերից մի քանիսը:

ԴԵՊՔ 1

Նկարագրություն

2025 թվականի հունվարի 22-ին, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի գործընթացի շրջանակներում Ա.Ս.-ն ներկայացել է տարածքային զինվորական կոմիսարիատ՝ օրենքով սահմանված անհրաժեշտ բժշկական զննություն անցնելու: Զինվորական կոմիսարիատից բացակայել է հոգեբանը, որի հետևանքով Ա.Ս.-ն խնդրել է զինկոմիսարիատի ղեկավարությունից հոգեբանի ընդունելություն՝ նպատակ ունենալով տեղեկացնել իր սեռական կողմնորոշման մասին: Հոգեբանի ընդունելություն պահանջելու պատճառը պարզաբանելու ընթացքում Ա.Ս.-ն ստիպված է եղել հրապարակայնորեն հայտնել իր սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկությունը, որից հետո զինկոմիսարիատի աշխատակիցների կողմից նրա նկատմամբ սկսվել են խտրական վերաբերմունքի դրսևորումներ: Մասնավորապես, ըստ Ա.Ս.-ի՝ զինկոմիսարիատի աշխատակիցների կողմից հնչեցվել են ծաղրական և նվաստացնող արտահայտություններ՝ «նման մարդկանց» անհրաժեշտ է զորակոչել բանակ՝ «տղամարդ դառնալու» կամ «մարդ դառնալու» նպատակով: Ա.Ս.-ն պահանջել է իր նկատմամբ դրսևորել հարգալից և արժանապատիվ վերաբերմունք, սակայն, ըստ նրա՝ զինկոմիսարիատի աշխատակիցների կողմից ծաղրական վերաբերմունքը շարունակվել է:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Նույն օրը Ա.Ս.-ն դիմել է «Դիգնիթի»-ին՝ իրավական աջակցություն ստանալու նպատակով: Վերջինիս տրամադրվել է խորհրդատվություն իր իրավունքների վերաբերյալ, ինչպես նաև Կազմակերպության իրավաբանի կողմից կապ է հաստատվել համապատասխան զինկոմիսարիատի հետ: Միջամտության արդյունքում Ա.Ս.-ի նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորումները դադարեցվել են, և ապահովվել է առանց խոչընդոտների հոգեբանի խորհրդատվություն:

ԴԵՊՔ 2

Նկարագրություն

Ա.Ս.-ն 2025թ. հունվարից աշխատանքի է անցել Երևան քաղաքի ռեստորաններից մեկում՝ փորձաշրջանով: Աշխատանքի ընդունման պահին Ա.Ս.-ի հետ չի կնքվել աշխատանքային պայմանագիր կամ որևէ այլ անհատական իրավական ակտ, որով կկարգավորվեին կողմերի աշխատանքային հարաբերությունները:
2025 թվականի փետրվարին ռեստորանի մենեջերը Ա.Ս.-ին տեղեկացրել է, որ նա համարվում է աշխատանքի ընդունված՝ որպես հիմնական աշխատակից, սակայն միաժամանակ հայտնել է, որ մեկամսյա փորձաշրջանի համար վարձատրություն չի նախատեսվում, իսկ հետագա աշխատավարձը ձևավորվելու է բացառապես այցելուների կողմից թողնված թեյավճարների հաշվին:
2025թ.-ի փետրվարի 12-ին՝ աշխատանքային հերթափոխից հետո, մենեջերը Ա.Ս.-ին տեղեկացրել է, որ ռեստորանի տնօրենի որոշմամբ դադարեցվում է նրա հետագա համագործակցությունը՝ առանց հիմնավորման:
Ա.Ս.-ի հաղորդմամբ՝ այլ աշխատակիցների հետ զրույցների արդյունքում պարզվել է, որ ռեստորանի մեկ այլ աշխատակից, որի հետ Ա.Ս.-ն ունի ընդհանուր ծանոթ, տնօրինությանը հայտնել է Ա.Ս.-ի սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկություններ[12]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Ա.Ս.-ն 2025թ. փետրվարի 13-ին դիմել է «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ:
Կազմակերպության աջակցությամբ համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին/Տեսչական մարմին/ և Պետական եկամուտների կոմիտեին: Գրությունների հիման վրա՝ 2025թ. փետրվարի 20-ին Տեսչական մարմնի որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ, իսկ փետրվարի 21-ին ստեղծվել է զննում իրականացնող աշխատանքային խումբ՝ ռեստորանում զննում իրականացնելու նպատակով:
Բողոքներից հետո ռեստորանի տնօրինությունը Ա.Ս.-ին առաջարկել է համաձայնության գալ բողոքները հետ վերցնելու պայմանով, որին Ա.Ս.-ն չի համաձայնել:
Հարուցված վարչական վարույթը ավարտվել է 2025թ.-ի մարտին: Տեսչական մարմնի կողմից արձանագրվել են խախտումներ և տրվել համապատասխան կարգադրագրեր:
Արդյունքում ռեստորանը Ա.Ս.-ին վճարել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափով՝ ներառյալ փորձաշրջանի ժամանակահատվածը:

[12] https://old.ngngo.net/2025/03/31/case_violation_arm/

ԴԵՊՔ 3

Նկարագրություն

2025 թվականի փետրվարի 20-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության աշխատակիցները ներխուժել են Երևան քաղաքում գործող «Ստոյկա» փաբ: Տուժողների պնդմամբ՝ ոստիկանները նախապես տեղեկացված են եղել, որ փաբում հիմնականում գտնվում են ԼԳԲՏՔԻ անձինք, և հենց այդ հանգամանքով պայմանավորված՝ վերջիններիս նկատմամբ կիրառել են անհամաչափ և բռնի գործողություններ: Մասնավորապես՝ ոստիկանության աշխատակիցները փաբում գտնվող բոլոր այցելուներին բռնի ուժով դուրս են հանել տարածքից, կիրառել են ֆիզիկական ուժ, ինչպես նաև նրանց պառկեցրել են գետնին: Տուժողների գնահատմամբ՝ ոստիկանության գործողությունները կրել են խտրական և նվաստացնող բնույթ՝ պայմանավորված այցելուների իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշմամբ, գենդերային ինքնությամբ:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Տուժողներից մեկը 2025 թվականի փետրվարի 21-ին դիմել է «Դիգնիթի»-ին՝ իրավական աջակցություն ստանալու նպատակով: Վերջինիս տրամադրվել է իրավական խորհրդատվություն՝ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացված գործողությունների օրինաչափության, ինչպես նաև պաշտպանության և բողոքարկման հնարավոր միջոցների վերաբերյալ՝ գործող օրենսդրության և մարդու իրավունքների միջազգային ստանդարտների համատեքստում:

ԴԵՊՔ 4

Նկարագրություն

2024 թվականի սեպտեմբերին անծանոթ անձինք շարունակաբար հետապնդել են Ա.Վ.-ին և նրա հասցեին հնչեցրել են մեկնաբանություններ, որոնք առնչվել են նրա սեռական կողմնորոշմանը: Ա.Վ.-ն մի քանի անգամ փորձել է խուսափել նշված անձանց հետ առճակատումից և կանխել հնարավոր բախումները:
2024 թվականի սեպտեմբերի 27-ին Ա.Վ.-ն նշված անծանոթ անձանց նկատել է իր բնակելի շենքի հարակից տարածքում և փորձել է փոխել իր ճանապարհը, սակայն դա չի հաջողվել: Նշված անձինք հարձակվել են Ա.Վ.-ի վրա, կիրառել են ֆիզիկական ուժ, ինչպես նաև վնասել են նրա անձնական իրերը:
Դեպքի վերաբերյալ Ա.Վ.-ն ներկայացրել է հանցագործության մասին հաղորդում իրավապահ մարմիններին, սակայն գործի քննությունը, ըստ նրա հաղորդման անարդյունավետ է:
Դեպքից հետո, անվտանգության նկատառումներից ելնելով, Ա.Վ.-ն փոխել է իր բնակության վայրը և բնակարան վարձակալել Երևան քաղաքի մեկ այլ վարչական շրջանում:

Սակայն 2025 թվականի փետրվարին իր նոր բնակության վայրի հարակից տարածքում կրկին նկատել է նույն անձանց, որոնք շարունակել են նրա նկատմամբ հետապնդող վարքագիծ դրսևորել և, ըստ Ա.Վ.-ի գնահատման, փորձել են վնաս պատճառել իրեն, ինչի արդյունքում վերջինիս անվտանգության և հոգեբանական ճնշման զգացողությունը էականորեն խորացել է:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

«Դիգնիթի»-ի կողմից Ա.Վ-ին տրամադրվել է իրավական խորհրդատվություն՝ իր իրավունքների, պաշտպանության և բողոքարկման հնարավոր միջոցների վերաբերյալ: Միաժամանակ Ա.Վ-ն ուղղորդվել է՝ Կազմակերպության հոգեբանական ծառայություններից օգտվելու՝ կրած բռնության և շարունակվող հոգեբանական ճնշման հետևանքները հաղթահարելու նպատակով:

ԴԵՊՔ 5

Նկարագրություն

Ռ.Ա.-ի զուգընկերոջ մայրը դեմ է Ռ.Ա.-ի և իր որդու շփմանը և տարբեր միջոցներով փորձել է խոչընդոտել նրանց հարաբերություններին: Կինը Ռ.Ա.-ին սպառնացել է, որ իր որդու հետ շփումը շարունակելու դեպքում Ռ.Ա.-ի հարազատներին կհայտնի վերջինիս սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկությունը:
2025 թվականի ապրիլին նշված կինը այցելել է Ռ.Ա.-ի բնակարան, հարձակվել Ռ.Ա-ի վրա և փորձել է վնաս պատճառել:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2025թ-ի ապրիլի 15-ին տուժողը դիմել է «Դիգնիթի»-ին՝ իրավական աջակցություն ստանալու նպատակով: Կազմակերպության կողմից Ռ.Ա.-ին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն՝ իր իրավունքների, պաշտպանության իրավական միջոցների վերաբերյալ: Արդյունքում Ռ.Ա.-ն հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել իրավապահ մարմիններին, որի հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ, գործը գտնվում է ընթացքի մեջ:

ԴԵՊՔ 6

Նկարագրություն

Մ.Ա.-ն լեսբի է: Ընտանիքի անդամները երկար ժամանակ/մոտ մեկ տարի/ տեղյակ են եղել նրա սեռական կողմնորոշման մասին և այդ հանգամանքով պայմանավորված՝ Մ.Ա.-ի նկատմամբ կիրառել են ազատ տեղաշարժը սահմանափակող և մեկուսացնող վարքագիծ՝ նրան պահելով տանը:

Բացի այդ, Մ.Ա.-ն ընտանիքի անդամների կողմից ենթարկվել է ֆիզիկական բռնության. նրան պարբերաբար ծեծի են ենթարկել՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Նշված գործողությունները կրել են շարունակական բնույթ:
2025 թվականի մայիսին Մ.Ա.-ին հաջողվել է փախչել տնից և ապաստան գտնել ընկերների տանը:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Մ.Ա.-ն 2025 թվականի մայիսի 20-ին դիմել է «Դիգնիթի»-ին: Վերջինիս տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն: Տուժողը հրաժարվել է հանցագործության մասին հաղորդում ներկայացնել, քանի որ չի ցանկացել ծնողների դեմ բողոքել:

ԴԵՊՔ 7

Նկարագրություն

Լ.Ս.-ն լեսբի է: Ընտանիքը դեռևս 2023 թվականից տեղեկացել է նրա սեռական կողմնորոշման մասին, ինչից հետո Լ.Ս.-ի նկատմամբ կիրառվել են ազատ տեղաշարժը սահմանափակող միջոցներ՝ նրան պահելով փակի տակ: Լ.Ս.-ն ընտանիքի անդամների կողմից ենթարկվել է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական բռնության:
«Դիգնիթի»-ի կողմից նախկինում՝ 2023-2024թթ.-ին հնարավոր է եղել Լ.Ս.-ին ցուցաբերել աջակցություն, սակայն վերջին շրջանում ընտանիքի կողմից կրկին վերսկսվել են հոգեբանական և ֆիզիկական բռնության դեպքերը: 2025 թվականի մայիսին ծնողները վերցրել են Լ.Ս.-ի անձնագիրը՝ նպատակ ունենալով սահմանափակել Լ.Ս.-ի իրավունքների իրացումը:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

«Դիգնիթի»-ի կողմից Լ.Ա.-ին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն: Կազմակերպության աջակցությամբ իրականացվել են անհրաժեշտ իրավական քայլեր, որոնց արդյունքում Լ.Ա.-ն ստացել է նոր անձնագիր:

ԴԵՊՔ 8

Նկարագրություն

2025թ.-ի ապրիլի 8-ին Ա.Հ-ն այցելել է իր նոր տեղամասային պոլիկլինիկա՝ բժշկական հետազոտություններ անցնելու նպատակով: Պոլիկլինիկայում խորհրդատվության արդյունքում բժիշկը որոշում է կայացրել անձին ուղեգրել նեղ մասնագիտացման բժշկի մոտ՝ ելնելով անձի խնդրից:

Խորհրդատվության ընթացքում Ա.Հ.-ն բժշկից ճշտումներ է կատարել «Արմեդ» համակարգում իր անունից գրանցված այցի մասին, որի վերաբերյալ վերջինս տեղեկություն չի ունեցել: Բժշկի խնդրանքով Ա.Հ.-ն ցույց է տվել «Արմեդ»-ի իր էջը, որտեղ, ի թիվս այլ տվյալների, արտացոլված է եղել նաև անձի սեռական կողմնորոշման մասին նշում:
Դա տեսնելուց հետո բժշկի վերաբերմունքը Ա.Հ-ի նկատմամբ կտրուկ փոխվել է: Կոպիտ տոնով ասել է Ա.Հ-ին, թե որևէ ուղեգրման կարիք չկա, կարող է գնալ: Ա.Հ-ն չհասկանալով բժշկի վերաբերմունքի կտրուկ փոփոխության պատճառը՝ խնդրել է մանրամասնել, թե ինչու ուղեգրման կարիք չկա: Բժիշկը, առանց բացատրություն տալու, սկսել է բղավել, ապա սենյակից դուրս է հանել Ա.Հ-ին՝ ասելով, թե այսուհետ չի պատրաստվում նրան սպասարկել[13]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Նույն պահին Ա.Հ-ն ահազանգել է «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ին: Կազմակերպության իրավաբանը կապ է հաստատել պոլիկլինիկայի տնօրինության, այնուհետև բժշկի հետ: Քննարկման արդյունքում անձին տրամադրվել է համապատասխան ուղեգիրը, իսկ բժշկի կողմից ներողություն է հայցվել նման պահվածքի համար:

ԴԵՊՔ 9

Նկարագրություն

Ա.Լ.-ն նույնասեռական անձ է և ենթակա է պարտադիր զինվորական ծառայությանզորակոչման: 2025 թվականի ապրիլին վերջինս ստացել է ծանուցում՝ բժշկական զննություններ անցնելու վերաբերյալ և ներկայացել է համապատասխան զինկոմիսարիատ: Ա.Լ.-ն անցել է սահմանված բոլոր բժշկական զննությունները, որոնց ընթացքում հոգեբանի հետ զրույցի ժամանակ հայտնել է իր սեռական կողմնորոշման մասին: Սահմանված կարգի համաձայն՝ վերջինս ուղղորդվել է հոգեկան առողջության կենտրոն:
2025 թվականի մայիսի 7-ին, երբ Ա.Լ.-ն վերադարձել է տուն, ծնողները հետաքրքրվել են հոգեկան առողջության կենտրոն այցելելու պատճառներով: Ա.Լ.-ն փորձել է խուսափել հարցին պատասխանելուց, ինչից հետո հայրը բարձրաձայն հայտնել է, որ զինկոմիսարիատից իրեն տեղեկացրել են, թե իր որդին «շեղված» է: Նշված արտահայտությունը ուղեկցվել է ագրեսիվ վարքագծով և բղավոցներով:
Ստացված տեղեկության հիման վրա ընտանիքում ծագել է լարված վիճաբանություն, որի ընթացքում ծնողները արգելել են Ա.Լ.-ին որևէ կերպ խոսել իր սեռական կողմնորոշման մասին և պահանջել են, որ նա պարտադիր գնա զինվորական ծառայության:

[13] https://old.ngngo.net/2025/03/31/case_violation_arm/

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2025թ.-ի մայիսի 10-ին Ա.Լ.-ն դիմել է «Դիգնիթի»-ին: Վերջինիս տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն, որի ընթացքում մանրամասն ներկայացվել են պարտադիր զինվորական ծառայության անցկացման կարգը, բժշկական և հոգեբանական զննությունների իրավական հիմքերը, ինչպես նաև զորակոչիկի իրավունքներն ու պաշտպանական մեխանիզմները:
Կազմակերպության աջակցությամբ շարունակվել է անձի զորակոչի ընթացակարգը, և արդյունքում, անձը ոչ պիտանի է ճանաչվել պարտադիր զինվորական ծառայության համար: Միևնույն ժամանակ Կազմակերպության կողմից ապահովվել է, որ զինկոմիսարիատի կողմից անձին վերաբերող տվյալները չփոխանցվեն Ա.Լ.–ի ընտանիքին:

ԴԵՊՔ 10

Նկարագրություն

Ա.Ա.-ն 2025թ.-ի մարտ-ապրիլ ամիսներին Երևան քաղաքի հոսթելներից մեկում վարձակալել է սենյակ: 2025թ.-ի մայիսի 5-ին Ա.Ա.-ն հեռախոսազրույց է ունեցել իր զուգընկերոջ հետ, ով գտնվել է արտերկրում: Վերջիններիս հեռախոսազրույցը լսելով և պարզելով, որ Ա.Ա.-ն նույնասեռական է՝ հոսթելի տնօրենը միանգամից սենյակ է մտել և բռնի ուժով Ա.Ա.-ին դուրս հանել հոսթելից՝ օգտագործելով խտրական և վիրավորական արտահայտություններ՝ մասնավորապես՝ նշելով, որ «արվամոլին տեղ չի տալու»:
Ա.Ա.-ն փորձել է իր անձնական իրերը վերցնել, սակայն տնօրենը արգելել է մուտք գործել հոսթելի տարածք:
Ա.Ա.-ն, հոսթելի իր սենյակում ունենալով արժեքավոր իրեր, նույն օրը դիմել է ոստիկանություն: Ոստիկանության հերթապահ բաժնի աշխատակիցները, տեղեկանալով, թե ինչու են անձին դուրս հանել հոսթելից, նրան հայտնել են, որ գործով հնարավոր կլինի զբաղվել հաջորդ օրը՝ աշխատանքային ժամերին[14]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Հաջորդ օրը՝ 2025թ.-ի մայիսի 7-ին Ա.Ա.-ն դիմել է «Դիգնիթի»-ին: Կազմակերպության աջակցությամբ կազմվել է գրավոր հաղորդում՝ իրավասու մարմիններին ներկայացնելու նպատակով:

ԴԵՊՔ 11

Նկարագրություն

Մ.Ա.-ն և իր ընկերները 2025թ. մայիսի 14-ին գտնվել են Երևանի Մ. Հերացու անվան Բժշկական համալսարանի մոտակայքում, երբ անհայտ անձինք սկսել են հետևել և հետապնդել իրենց: Լսելով հետապնդող անձանց խոսակցությունը,

[14] https://old.ngngo.net/2025/03/31/case_violation_arm/

որի ժամանակ քննարկել են Մ.Ա.-ի և ընկերների ենթադրյալ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, վերջիններս որոշել են հեռանալ այդ տարածքից: Սակայն անծանոթները շարունակել են քաղաքացիներին հետապնդել[15]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Հայտնվելով հոգեբանական լարվածության և վախի մթնոլորտում՝ Մ.Ա.-ն և նրա ընկերները դիմել են «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ի Դրոփին կենտրոն՝ իրենց անվտանգության ապահովման և իրավական աջակցություն ստանալու նպատակով: Անծանոթ անձինք շարունակել են հետապնդումը մինչև կենտրոնի հարակից տարածք, սակայն չեն կարողացել հստակ որոշել անձանց գտնվելու վայրը:
Կազմակերպության աջակցությամբ անծանոթ անձինք դադարեցրել են Մ.Ա.-ի և նրա ընկերների հետապնդումը:

ԴԵՊՔ 12

Նկարագրություն

Ա.Ա.-ն 2025թ.-ի հունվարին զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության: Զորակոչի փուլում Ա.Ա.-ն վախեցել է իր սեռական կողմնորոշման մասին հայտնել զինվորական կոմիսարիատում, քանի որ մտավախություն է ունեցել տեղեկատվության տարածման հետ կապված:
2025թ.-ի մայիսին Ա.Ա.-ի սեռական կողմնորոշման մասին տեղեկատվությունը տարածվել է զորամասում իր ընկերներից մեկի միջոցով, և դրանից հետո զինծառայողների և հրամանատարական անձնակազմի կողմից Ա.Ա.-ի նկատմամբ սկսվել են խտրական դրսևորումներ և ճնշումներ[16]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2025թ-ի մայիսին Ա.Ա.-ն դիմել է «Դիգնիթի»-ին: Կազմակերպության կողմից անձին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն՝ ՀՀ օրենսդրության համաձայն՝ անձին զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու համար: Արդյունքում, Ա.Ա.-ն տեղափոխվել է Երևանի կայազորային հոսպիտալ/հոսպիտալ/:
Հոսպիտալում Ա.Ա.-ին ընդունող բժիշկը հայտնել է, որ կավարտեն ձևական գործընթացը և նրան կուղարկեն այլ զորամաս՝ «իր նմանների հետ ծառայելու»: Կազմակերպության իրավաբանը կապ է հաստատել հոսպիտալի համապատասխան բաժնի բժշկի հետ և քննարկել օրենսդրական դրույթները: Իրավաբանի կողմից պահանջվել է գործընթացը իրականացնել օրենքներին համապատասխան: Այդ խնդիրների մասին տեղեկացվել է ՀՀ ՄԻՊ-ին և Պաշտպանության նախարարությանը:
Մի քանի օր անց նույն բժիշկը Ա.Ա.-ին հայտնել է, որ պետք է նրա մայրիկին հրավիրեն հոսպիտալ, որպեսզի քննարկեն Ա.Ա.-ի խնդիրը:

[15] https://old.ngngo.net/2025/03/31/case_violation_arm/
[16]https://dignity.ngo/am/with-the-support-of-ngngo-the-person-was-prematurely-discharged-from-military-service-

Վերջինս հայտնվել է հոգեբանական ծանր վիճակում, քանի որ իր սեռական կողմնորոշման մասին տեղեկատվության բացահայտումից հետո ընտանիքը իրենից կհրաժարվի:
Կազմակերպությունը կապ է հաստատել հոսպիտալի բժշկի, ՀՀ ՄԻՊ-ի և ՊՆ-ի հետ՝ խնդրի լուծման համար: Ի վերջո՝ հաջողվել է կանխել բժշկի կողմից Ա.Ա.-ի մորը հրավիրելը և վերջինիս հետ Ա.Ա.-ի խնդիրը քննարկելը:
Արդյունքում, Ա.Ա.-ն հոսպիտալում անցել է համապատասխան բժշկական զննումների գործընթացը, և 2025թ.-ի հուլիսին ճանաչվել է ոչ պիտանի պարտադիր զինվորական ծառայության համար:
Ա.Ա.-ի անձնական տվյալների գաղտնիությունը ապահովելու նպատակով՝ «Դիգնիթի»-ի աջակցությամբ Ա.Ա.-ի զինկոմիսարիատի հաշվառումը տեղափոխվել է այլ զինկոմիսարիատ:
Պարտադիր զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո սահմանված ժամկետում Ա.Ա.-ին չի տրամադրվել իր զինվորական գրքույկը: Այն հնարավոր է եղել ստանալ Կազմակերպության միջամտության արդյունքում:

ԴԵՊՔ 13

Նկարագրություն

2025 թվականի մայիսի 20-ին Ա.Հ.-ն բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության կողմից և տեղափոխվել ոստիկանության բաժին: Բաժնում նրա բջջային հեռախոսը և այլ տեխնիկական սարքավորումները վերցրել են, որից հետո իրականացվել է խուզարկություն: Խուզարկության ընթացքում IT մասնագետը սկսել է ուսումնասիրել Ա.Հ.-ի անձնական բնույթի տվյալները, որոնց թվում առկա են եղել նաև Ա.Հ.-ի սեռական կողմնորոշմանը վերաբերող տեղեկատվություն և նյութեր:
Հատկանշական է, որ քննիչի և IT մասնագետի կողմից ձեռք բերված տեղեկատվությունը՝ որպես անձնական և ոչ հանրային բնույթի տվյալներ, պատշաճ գաղտնիություն չպահպանելու հետևանքով հասանելի է դարձել բաժնի այլ պաշտոնատար անձի: Վերջինս Ա.Հ.-ի սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկատվությունը հայտնել է Ա.Հ.-ի քրոջը և կատարել վիրավորական մեկնաբանություն՝ ասելով՝ «Ինքը չի կարում, ինքը տղա չի»:
Նկարագրված գործողությունները հանգեցրել են Ա.Հ.-ի և նրա քրոջ միջև հարաբերությունների լարման, ինչպես նաև Ա.Հ.-ի համար հոգեբանական ճնշման: Ա.Հ.-ն հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել՝ անձնական տվյալների գաղտնիության խախտման հիմքով:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2025 թվականի օգոստոսի 12-ին Ա.Հ.-ն դիմել է «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ին: Կազմակերպության կողմից Ա.Հ.-ին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն, ներառյալ իրավական ընթացակարգերի, պետական մարմինների պարտականությունների և անձնական տվյալների պաշտպանության մասին տեղեկությունների տրամադրում: Աջակցության գործընթացը շարունակվում է՝ Ա.Հ.-ի իրավունքների պաշտպանությունն ապահովելու նպատակով:

ԴԵՊՔ 14

Նկարագրություն

2025 թվականի օգոստոսի 15-ին Ա.Ե.-ն դիմել է ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիոն կենտրոն՝ փախստականի կարգավիճակ ստանալու նպատակով համապատասխան դիմում ներկայացնելու համար: Ա.Ե.-ի պնդմամբ՝ միգրացիոն կենտրոնի աշխատակիցները, տեղեկանալով, որ Ա.Ե.-ն լեսբի է, հրաժարվել են ընդունել իր դիմումը՝ հայտնելով, որ տվյալ փուլում չեն կարող դիմումն ընդունել և առաջարկել են ամիսներ անց կրկին դիմել կենտրոն:
Ա.Ե.-ն փորձել է պարզաբանում ստանալ դիմումը չընդունելու պատճառների և իրավական հիմքերի վերաբերյալ, սակայն, ըստ նրա, որևէ հստակ հիմնավորում կամ պատասխան չի ստացել: Ա.Ե.-ի գնահատմամբ՝ միգրացիոն կենտրոնի աշխատակիցների վարքագիծը կրել է խտրական բնույթ՝ պայմանավորված նրա սեռական կողմնորոշմամբ, ինչի հետևանքով նա զրկվել է փախստականի կարգավիճակ ստանալու դիմում ներկայացնելու հնարավորությունից տվյալ պահին: Ստեղծված իրավիճակի պայմաններում Ա.Ե.-ն ստիպված է եղել լքել միգրացիոն կենտրոնը:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2025 թվականի սեպտեմբերի 12-ին Ա.Ե.-ն դիմել է «Դիգնիթի»-ին՝ իրավական աջակցություն ստանալու նպատակով: Կազմակերպության իրավաբանի կողմից կապ է հաստատվել ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիոն կենտրոնի հետ, որի ընթացքում, ձեռք է բերվել պայմանավորվածություն առ այն, որ դիմումի ընդունման ընթացքում արձանագրված թերությունները կշտկվեն:
Արդյունքում, նույն օրը Ա.Ե.-ն կրկին այցելել է միգրացիոն կենտրոն, որտեղ նրա՝ փախստականի կարգավիճակ ստանալու դիմումն ընդունվել է: 2025 թվականի սեպտեմբերի 15-ին Ա.Ե.-ին տրամադրվել է ապաստան հայցողի վկայական:

ԴԵՊՔ 15

Նկարագրություն

Մ.Ա.-ն չափահաս է, մեծացել է ավանդական ընտանիքում, ինչի հետևանքով իր սեռական կողմնորոշման մասին տեղեկությունը մշտապես թաքցրել է ծնողներից: 2024 թվականին Մ.Ա.-ն տեղափոխվել է Երևան՝ ուսումը շարունակելու նպատակով: 2025 թվականի ամռանը, արձակուրդային շրջանում, վերադարձել է ծնողների տուն: 2025 թվականի օգոստոսին հայրը, պատահաբար լսելով Մ.Ա.-ի հեռախոսային խոսակցությունը, տեղեկացել է որդու սեռական կողմնորոշման մասին, ինչից հետո արգելել է նրան վերադառնալ Երևան և շարունակել ուսումը: Արդյունքում, Մ.Ա.-ն շուրջ երկու ամիս մեկուսացված է եղել: 2025 թվականի նոյեմբերի 11-ին Մ.Ա.-ի մի խումբ ընկերներ այցելել են նրա ծնողների բնակարան՝ պարզելու իրավիճակը:

Ընկերները, հասկանալով, թե ինչ է կատարվում, փորձել են Մ.Ա.-ին օգնել դուրս գալ տնից, սակայն ծնողները՝ հարազատների ու հարևանների աջակցությամբ, ֆիզիկական ուժի կիրառմամբ թույլ չեն տվել Մ.Ա.-ին դուրս գալ, իսկ ընկերներին հարկադրել են հեռանալ գյուղի տարածքից:
Նույն օրը Մ.Ա.-ի ընկերները զանգահարել են ոստիկանություն և ներկայացրել իրավիճակը: Դեպքի վայր ժամանած համայնքային ոստիկանները խոսել են կողմերի հետ, սակայն միջամտությունը սահմանափակվել է Մ.Ա.-ի ընկերներին հորդորելով «ընտանեկան հարցերին չմիջամտել», ինչի արդյունքում ընկերները ստիպված լքել են տարածքը:
2025 թվականի նոյեմբերի 29-ին Մ.Ա.-ի ընկերները կրկին այցելել են նրա ծնողների տուն՝ նախապես ահազանգելով ոստիկանություն: Իրավապահների արձագանքը կրկին ձևական բնույթ է կրել[17]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2025 թվականի նոյեմբերի 29-ին Մ.Ա.-ի ընկերները կապ են հաստատել «Դիգնիթի»-ի հետ: Վերջիններիս տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն: Կազմակերպության իրավաբանը կապ է հաստատել ոստիկանության համապատասխան բաժնի հետ և ներկայացրել իրավապահ մարմինների պարտականությունները նմանատիպ իրավիճակների դեպքում, մասնավորապես՝

- անձի տեղաշարժի ազատության ապահովում,
- ընտանեկան բռնության կանխարգելման պարտականություններ:

Արդյունքում, իրավապահ մարմինների անմիջական աջակցությամբ ապահովվել է Մ.Ա.-ի անվտանգ դուրս բերումը ծնողների տնից, ինչպես նաև Մ.Ա.-ի ծնողների նկատմամբ կիրառել են նախազգուշացում՝ որպես ընտանեկան բռնության կանխարգելման միջոց:

ԴԵՊՔ 16

Նկարագրություն

2025 թվականի ապրիլի 5-ին, Ի.Ա.-ն քայլելիս է եղել Երևան քաղաքի Նալբանդյան փողոցում և զուգահեռ սոցիալական ցանցի միջոցով շփվել ընկերների հետ: Այդ ընթացքում Ի.Ա.-ին է մոտեցել անծանոթ տղամարդ և խնդրել հետևել իրեն: Անծանոթին հետևելով՝ Ի.Ա.-ն հասկացել է, որ շարժվում են դեպի Ազգային անվտանգության ծառայության շենք: Շենք մուտք գործելուց հետո Ի.Ա.-ից վերցրել են իր անձնական տվյալները, որից հետո ասել, թե կարող է հեռանալ:
Ամիսներ անց՝ 2025 թվականի հուլիս ամսին, Ի.Ա.-ն զանգ է ստանում և պարզվում է, որ զանգահարողը նույն անձն է, ով հանդիսանում է ԱԱԾ աշխատակից: Վերջինս Ի.Ա.-ին տեղեկացրել է, որ կարևոր խոսակցության համար պետք է ներկայանա ԱԱԾ: Ի.Ա.-ն ներկայացել է ԱԱԾ՝ մոր ուղեկցությամբ, սակայն մայրը դրսում սպասել է: Ի.Ա.-ն առանձնազրույց է ունեցել զանգահարող անձի հետ, որի ընթացքում նրան ուղղվել են անձնական բնույթի հարցեր: Ավելին, Ի.Ա.-ի բջջային հեռախոսը ենթարկվել է ուսումնասիրման, որի արդյունքում ԱԱԾ աշխատակցին հայտնի են դարձել Ի.Ա.-ի սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկություններ, և նա փորձել է պարզել, թե արդյոք այդ տեղեկությունները հայտնի են նաև ընտանիքի անդամներին:

[17] https://dignity.ngo/am/law-enforcement-authorities-implemented-preventive-measures-with-the-intervention-of-new-generation-ngo-

Տեղեկանալով, որ Ի.Ա.-ի ընտանիքի անդամներին հայտնի չէ վերջինիս սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկությունը, ԱԱԾ աշխատակիցը այդ տեղեկատվությունը հայտնի չդարձնելու պայմանով ստիպել է Ի.Ա.-ին դիմում գրել այն մասին, որ պարտավորվում է օգնել երկին՝ տրամադրելով տեղեկատվություն: Այնուհետև՝ ամիսներ շարունակ, նույն աշխատակիցը պարբերաբար զանգահարել է և հաղորդագրություններ ուղարկել Ի.Ա.-ին՝ պահանջելով տեղեկատվություն ԼԳԲՏՔԻ անձանց և կազմակերպությունների վերաբերյալ, մասնավորապես՝ սոցիալական մեդիայում առկա էջերի, հրապարակումների և խոցելի խմբերի մասին: Տեղեկատվության անհրաժեշտությունը հիմնավորվել է նրանով, որ այն անհրաժեշտ է «անվտանգության նպատակներով», օրինակ՝ կանխելու հնարավոր սպառնալիքները ԼԳԲՏՔԻ համայնքին:
Ի.Ա.-ն հայտնվել է անելանելի իրավիճակում՝ հստակ հրաժարման կամ բացասական արձագանքի դեպքում վտանգ ունենալով, որ իր սեռական կողմնորոշման մասին տեղեկություն կհայտնվի ընտանիքի անդամներին և/ կամ հանգեցնի ավելի խիստ ճնշումների:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2025թ-ի հոկտեմբերին Ի.Ա.-ն դիմել է «Դիգնիթի»-ին: Վերջինիս տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն: Պայմանավորվածություն է ձեռք բերվել գործին ընթացք տալ՝ Ի.Ա.-ի կողմից վերջնական որոշում կայացնելու դեպքում համար:

Այլ հիմքերով խտրականության դրսևորումների դեպքեր

ԴԵՊՔ 17

Նկարագրություն

2025թ.-ի փետրվարի 15-ին Ա.Մ.-ի բնակարան է այցելել անծանոթ հաճախորդ՝ սեռական ծառայություններից օգտվելու նպատակով: Ա.Մ.-ի ծառայություններից օգտվելուց հետո հաճախորդը հրաժարվել է կնոջը վճարել պայմանավորված գումարը: Վճարման հարցի շուրջ ծագած վիճաբանության ընթացքում՝ այն պահին, երբ Ա.Մ.-ն սպառնացել է դիմել ոստիկանություն, վերջինս ենթարկվել է ֆիզիկական բռնության՝ հաճախորդը հարվածներ է հասցրել նրա մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով տեսանելի մարմնական վնասվածքներ[18]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Ա.Մ.-ն դիմել է ոստիկանություն: Դեպքի վայր ժամանած իրավապահները կազմել են համապատասխան արձանագրություն: 2025թ. փետրվարի 17-ին ոստիկանության պահանջով Ա.Մ.-ն ներկայացել է բաժին՝ լրացուցիչ բացատրություն ներկայացնելու նպատակով, սակայն վերջինիս չի տրամադրվել ուղեգիր՝ դատաբժշկական փորձաքննություն անցնելու համար:
Նույն օրը՝ փետրվարի 17-ին, անձը դիմել է «Դիգնիթի»-ին: Կազմակերպության կողմից անձին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև Կազմակերպության աջակցության արդյունքում Ա.Մ.-ն ուղեգրվել է դատաբժշկական փորձաքննության:

ԴԵՊՔ 18

Նկարագրություն

2025թ.-ի ապրիլին Գ.Բ.-ն այցելել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի ծննդատուն /ԲԿ/՝ առողջական վիճակի գանգատների պատճառով: Հետազոտության արդյունքում արձանագրվել են խնդիրներ և վիրահատական միջամտության ցուցում է տրվել: 2025թ.-ի հունիսին նույն ԲԿ-ում կատարվել է վիրահատական միջամտություն՝ առանց լրացուցիչ հետազոտություններ կատարելու: 2025թ.-ի հունիսի 4-ին անձը դուրս է գրվել հիվանդանոցից՝ առանց լրացուցիչ զննություն անցնելու: Հիվանդանոցից դուրս գրվելուց մի քանի օր անց Գ.Բ.-ի ինքնազգացողությունը վատթարացել է, և Գ.Բ.-ն կապ է հաստատել բժշկի հետ, որից հետո այցելել ԲԿ: Բժիշկընշել է, որ բորբոքային գործընթացներ են սկսվել, ապա հնչեցրել է վիրավորական արտահայտություններ ուղղված Գ.Բ.-ին:
Եվս մի քանի օր անց Գ.Բ.-ի ինքնազգացողությունը կրկին վատթարացել է, և վերջինս շտապօգնության մեքենայով տեղափոխվել է Երեբունի ԲԿ, որտեղ Գ.Բ.-ին ուղղորդել են այն ԲԿ, որտեղ կատարվել է վիրահատությունը: Գումար չունենալու պատճառով Գ.Բ.-ն ստիպված է եղել տաքսիիով տեղափոխվել ԲԿ:

[18] https://old.ngngo.net/2025/02/20/sw_february_arm/

Հաջորդ օրը ԲԿ-ում կատարվել են հետազոտություններ, որոնց արդյունքները չեն մեկնաբանվել Գ.Բ.-ին: Բժշկի կողմից կատարվել է միջամտություն առանց անձին տեղեկացնելու միջամտության բնույթը: Միջամտությունից հետո Գ.Բ.-ի ունեցած գանգատներից հետո կատարվել է ԿՏ հետազոտություն, որի արդյունքները ստանալուց հետո բժիշկը Գ.Բ.-ին հայտնել է, որ միջամտության արդյունքում ծակել է նրա միզապարկը: Այնուհետև բժիշկը նշել է, որ նման բաներ գրեթե բոլոր հիվանդանոցներում պատահում են և, որ Գ.Բ.-ն պետք է երեք ամիս մի կերպ «յոլա գնա», որից հետո նոր վիրահատություն է սպասվելու՝ միզապարկը պետք է կարվի:

Փաստացի Գ.Բ.-ին բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվել է թերի, ավելին՝ վնաս է հասցվել անձի առողջության, որի հետևանքները Գ.Բ.-ն շարունակում է կրել[19]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Գ.Բ.-ն 2025թ.-ի հունիսին դիմել է «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ: Տուժողին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն:

2025թ.-ի հուլիսի 24-ին Կազմակերպության աջակցությամբ դիմում-բողոք է ուղարկվել ՀՀ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին/Տեսչական մարմին/: Տեսչական մարմնի կողմից հարուցվել է վարչական վարույթ: 2025թ.-ի օգոստոսի 13-ին Տեսչական մարմնի կողմից որոշում է կայացվել վարույթը կարճելու մասին: Որոշման մեջ արձանագրված որոշ փաստեր չեն համապատասխանում դիմումատուի կողմից բարձրաձայնած խնդրին, որի հիմքով որոշումը բողոքարկման փուլում է:

Գ.Բ.-ն 2025թ-ի հուլիսի սկզբներին հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել Նոր-Նորք վարչական շրջանի քննչական վարչությունում: Քննիչի կողմից Գ.Բ.-ին չի տրամադրվել դատաբժշկական փորձաքննություն անցնելու վերաբերյալ ուղեգիր, ինչի կապակցությամբ 2024թ.-ի հուլիսի 24-ին Կազմակերպության աջակցությամբ բողոք է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն: Բողոքը ուղարկելուց օրեր անց Գ.Բ.-ն ուղեգրվել է համապատասխան փորձաքննությանը:

Շուրջ մեկ ամիս Գ.Բ.-ն որևէ տեղեկատվություն չի ստացել քրեական գործի ընթացքի վերաբերյալ: Կազմակերպության աջակցությամբ գրություններ են հասցեագրվել համապատասխան գերատեսչություններին՝ գործի ընթացքի մասին տեղեկանալու նպատակով:

ԴԵՊՔ 19

Նկարագրություն

2025թ.-ի սեպտեմբերի 26-ի գիշերը Ա.Ա.-ն իր ընկերոջ հետ զբոսնելիս է եղել Երևան քաղաքի կենտրոնում, երբ նրանց են մոտեցել քաղաքացիական հագուստով անձինք: Այդ անձինք ներկայացել են՝ որպես ոստիկանության աշխատակիցներ, և Ա.Ա.-ից ու իր ընկերոջից պահանջել են դատարկել գրպանի և պայուսակի պարունակությունները: Ոստիկանները Ա.Ա-ի պայուսակի իրերի մեջ նկատել են դեղորայք և հետաքրքրվել, թե ինչ է դեղորայք է դա: Ա.Ա.-ն չի

[19]https://dignity.ngo/am/due-to-negligent-medical-care-the-individual-suffered-health-damage-a-criminal-case-has-been-initiated

մեկնաբանել դեղորայքի նշանակությունը, սակայն նշել է, որ բժշկի ցուցումով է: Ա.Ա.-ն չի ցանկացել բացահայտել իր ՄԻԱՎ դրական կարգավիճակը: Ոստիկանները սկսել են հետաքրքրվել, թե արդյոք դա թմրանյութ է,որից հետո, վերցնելով դեղորայքը, փորձել են համացանցում փնտրել տեղեկատվություն: Արդյունքում, պարզելով, որ այդ դեղերը հակառետրովիրուսային դեղեր են՝ Ա.Ա.-ին ասել են, որ կարող է հեռանալ:
Ա.Ա.-ն պնդել է, որ ոստիկանները ներկայանան, սակայն ապարդյուն: Ա.Ա.-ն ոստիկանների անօրինական գործողությունների համար հաղորդում ներկայացնելու նպատակով ցանկացել է տեղափոխվել բաժին, սակայն ոստիկանները թույլ չեն տվել իրենց մեքենան նստել:
Ա.Ա.-ն նույն պահին ուղևորվել է ոստիկանության բաժին և հաղորդում ներկայացրել[20]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

2025թ.-ի սեպտեմբերի 26-ի Ա.Ա.-ն դիմել է «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ և ստացել իրավաբանական խորհրդատվություն: «Դիգնիթի»-ի կողմից Ա.Ա.-ին աջակցության տրամադրումը շարունակվում է: Գործը գտնվում է ընթացքի մեջ:

ԴԵՊՔ 20

Նկարագրություն

Ա.Մ.-ն սեռական ծառայություն մատուցող կին է: Վերջինս 2025թ. հոկտեմբերի 15-ին ենթարկվել է ֆիզիկական բռնության իր հաճախորդի կողմից: Ֆիզիկական բռնության հետևանքով Ա.Մ-ն ստացել է մարմնական վնասվածքներ, ինչպես նաև կրել գույքային վնաս: Դեպքից անմիջապես հետո՝ 2025թ. հոկտեմբերի 16-ին, տուժողը գրավոր դիմում է ներկայացրել ոստիկանության տարածքային բաժին՝ հաղորդելով հանցագործության վերաբերյալ և խնդրելով ապահովել իր իրավունքների պաշտպանությունը, իրականացնել պատշաճ քննություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան:
2025թ.-ի հոկտեմբերի 21-ին Ա.Մ-ն ստացել է քրեական վարույթ չնախաձեռնելու մասին քննիչի որոշումը: Չնայած առկա մարմնական վնասվածքներին՝ տուժողը չէր ուղեգրվել դատաբժշկական փորձաքննության[21]:

Տրամադրված աջակցությունը և ընթացքը

Տուժողը, իր իրավունքների պաշտպանության նպատակով, 2025թ.-ի հոկտեմբերի 28-ին դիմել է «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ: Կազմակերպության կողմից տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն: Խորհրդատվության արդյունքում կազմվել է բողոք քննիչի որոշման դեմ՝ ուղղված ՀՀ գլխավոր դատախազությանը: Գրությամբ նաև պահանջ է ներկայացվել դատաբժշկական փորձաքննության ուղեգրման մասով: 2025թ.-ի նոյեմբերի 11-ին ստացվել է դատախազության պատասխան գրությունը, համաձայն որի՝ գրությունը վերահասցեավորվել է համապատասխան վարչական շրջանի դատախազությանը՝ ուսումնասիրություն կատարելու նպատակով: 2025թ.-ի նոյեմբերի 20-ին քննիչի կողմից որոշում է կայացվել քրեական վարույթ նախաձեռնելու մասին, ինչպես նաև տուժողը ուղեգրվել է դատաբժշկական փորձաքննության:

[20] https://dignity.ngo/am/police-officers-revealed-an-individuals-hiv-positive-status-
[21] https://dignity.ngo/am/proceedings-in-a-violence-case-reopened-through-ngngo-intervention

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Սույն բաժնում ներկայացված են 2025թ.-ի ընթացքում շարունակված ռազմավարական դատավարության մի քանի առանձնահատուկ նշանակության գործեր.

ԳՈՐԾ 1

Նկարագրություն

Տրանսգենդեր կին Ս.Պ.-ի և Ա.Ս.-ի նկատմամբ 2017թ.-ի սեպտեմբերի 22-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի հատկանիշներով: Գործի նախապատմությունը ներկայացված է 2018թ.ի իրավական ամփոփագրում (Դեպք 3)[22]: Կալանքի տակ գտնվելու ժամանակահատվածում Ս.Պ.-ն բազմիցս ենթարկվել է դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և խոշտանգման, որի վերաբերյալ նույնպես փաստաբանի կողմից ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում: Ս.Պ.-ն և Ա.Ս.-ն շուրջ երկու տարի գտնվել են անօրինական կալանքի տակ, որի վերաբերյալ գանգատ է ներկայացվել ՄԻԵԴ[23]:

Իրավական ընթացքը

Գործում ներգրավված է «Դիգնիթի»-ի փաստաբան Արա Ղարագյոզյանը: 2020թ.-ի սեպտեմբերի 24-ին ՄԻԵԴ-ի կողմից կայացվել է վճիռ Ա.Ս.-ն ընդդեմ Հայաստանի և Ս. Պ.-ն ընդդեմ Հայաստանի գործերով: Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ընդունել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված դիմումատուների իրավունքների խախտումը և վճռով ՄԻԵԴ-ը պետությանը պարտավորեցրել փոխհատուցում տրամադրել[24]:
Գործով դատավարությունը ավարտվել է 2025թ-ի դեկտեմբերի 11-ին: Դատարանի որոշմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

ԳՈՐԾ 2

Նկարագրություն

17.05.2014թ. www.iravunk.com առցանց լրատվական կայքում «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. ազգի և պետության թշնամիների սև ցուցակը» վերնագրով հոդված է հրապարակվել, որը հեղինակել է լրագող Հովհաննես Գալաջյանը: Հոդվածում տեղ են գտել Գրիգոր Գևորգյանի, Արման Սահակյանի և Հովհաննես Մկրտչյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող՝ վիրավորող և զրպարտող տեղեկություններ:

[22]chromeextension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://dignity.ngo/images_list/uploaded/image_YqBIT6V8Ow_%D4%BB%D5%90%D4%B1%D5%8E%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86_%D4%B1%D5%84%D5%93%D5%88%D5%93%D4%B1%D4%B3%D4%BB%D5%90_ARM_2018__NGNGO_NHC.pdf
[23]https://old.ngngo.net/2019/07/02/%D5%B6%D5%B8%D6%80-%D5%BD%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%B6%D5%A4-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%AF-%D5%AB-2-%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1/
[24] https://old.ngngo.net/2020/09/25/%d5%b4%d5%ab%d5%a5%d5%a4/

Վերջիններիս կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան՝ ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՍՊ ընկերության խմբագրական խորհրդի նախագահ Հայկ Բաբուխանյանի, Հովհաննես Գալաջյանի: 2015 թվականի մայիսի 14-ի վճռով (որում որպես պատասխանողներ նշված են եղել «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ն և Հովհաննես Գալաջյանը) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մասնակիորեն բավարարել էր դիմորդների հայցը: Հայկ Բաբուխանյանի կողմից ներկայացվել էր վերաքննիչ բողոք, որով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.05.2016 թվականի որոշմամբ 14.05.2015 թվականի վճիռը բեկանվել էր և գործն ուղարկվել նոր քննության: «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ փաստաբան Արա Ղազարյանի կողմից 2016թ.-ին դիմում էր ներկայացվել ՄԻԵԴ այն բանի համար, որ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2016 թվականի մայիսի 26-ի որոշումը, որով չեղյալ է հայտարարվել իրենց օգտին կայացված վերջնական վճիռը, խախտում է իրավական որոշակիության սկզբունքը՝ համաձայն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի: Դիմումները կոմունիկացվել են 2021թ.-ի մարտի 9-ին[25]:

Իրավական ընթացքը

- Արա Ղազարյանի կողմից 2016թ-ին ներկայացված գանգատի առնչությամբ 2025թ.-ի դեկտեմբերի 18-ին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից հրապարակվել է վճիռը՝ Ա. Սահակյանը և մյուսներն ընդդեմ Հայաստանի (դիմումը ներկայացվել է 09.08.2016թ.-ին): Ըստ դիմումատուների՝ տեղի է ունեցել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

ՄԻԵԴ-ի որոշմամբ հաստատվել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի/արդար դատաքննության իրավունք/ խախտում և պետությանը պարտավորեցրել է դիմորդներին տրամադրել փոխհատուցումներ[26]:

- 2025թ-ի փետրվարի 6-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը հրապարակել է գործով վճիռը: Դատարանը վճռել է քաղաքացիական գործի վարույթը կարճել պատասխանող Հովհաննես Գալաջյանի մահվան հիմքով: Միաժամանակ, Դատարանը մերժել է Արման Էդուարդի Սահակյանի և Հովհաննես Հակոբի Մկրտչյանի հայցն ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի՝ հիմնավորելով, որ լրատվական գործունեություն իրականացնող «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ն (հրապարակողը) Հոդվածը հրապարակելիս բացահայտել է հրապարակվող նյութի հեղինակին՝ նշելով Հովհաննես Գալաջյանի անունը, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ հայցվորների ներկայացրած հայցին պետք է պատասխաներ, այսինքն՝ լիներ պատշաճ պատասխանող, միայն Հովհաննես Գալաջյանը, այլ ոչ թե «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ն[27]: «Դիգնիթի» ՀԿ-ի փաստաբան Արայիկ Ձալյանի կողմից ներկայացվել է ՄԻԵԴ գանգատ:

[25] https://old.ngngo.net/2021/05/07/%d5%b4%d5%ab%d5%a5%d5%a4-2/
[26] https://dignity.ngo/am/sahakyan-and-others-v-armenia
[27] https://old.ngngo.net/2025/02/27/iravunk_media_ngngo_arm_2025/

ԳՈՐԾ 3

Նկարագրություն

2023թ.-ի մարտի 23-ին ժամը 13:00-ին «Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ն ահազանգ է ստացել այն մասին, որ Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցում մի խումբ անձինք հարձակվել են օտարերկրյա քաղաքացի Ք.Մ.-ի և ՀՀ քաղաքացի Ա.Ս.-ի վրա Ք.Մ.-ի «տարբերվող» արտաքին ունենալու պատճառով: Ք.Մ.-ն և Ա.Ս.-ն ստացել են մարմնական վնասվածքներ: Ք.Մ.-ն գիտակցության մասնակի կորուստ է ունեցել և շտապօգնության մեքենայով տեղափոխել է Վանաձորի բժշական կենտրոն: Բժշկական կենտրոնում տուժող Ք.Մ.-ին տրամադրվել է առաջին բժշկական օգնություն, ով, վիճակը բավարար գնահատելուց հետո, դուրս է գրվել հիվանդանոցից: Ոստիկանները տուժողներին ուղեկցել են Վանաձորի ոստիկանության բաժին հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու համար[28]:

Ա.Ս.-ն վախեցել է դիմել բուժօգնության, քանի որ գտնվել է հոգեբանական, հուզական ծանր վիճակում, ինչպես նաև մտավախություն է ունեցել, որ հետագայում գուցե այդ հարձակվողները իր հետ հաշվեհարդար տեսնեն, ուստի հրաժարվել է հանցագործության մասին հաղորդում ներկայացնել: Այնուամենայնիվ, ոստիկանության բաժնում ոստիկանների կողմից ճնշում է գործադրվել անձի վրա՝ ստիպելով նրան հաղորդում ներկայացնել:

Իրավական ընթացքը

«Դիգնիթի» ՀԿ-ն ահազանգը ստանալուն պես ներգրավվել է գործում և տրամադրել իրավական աջակցություն: Կազմակերպության կողմից կապ է հաստատվել ոստիկանության համապատասխան բաժնի աշխատակցի հետ, որից հետո դադարեցվել են ճնշումները Ա.Ս.-ի նկատմամբ, և տուժողըկարողացել է դուրս գալ ոստիկանության բաժնից: Տուժողներից Ք.Մ.-ն հաղորդում ներկայացրել է, որի հիման վրա նախաձեռնվել է քրեական վարույթ: Գործում Կազմակերպության կողմից ներգրավվել է «Արկատ» փաստաբանական գրասենյակը՝ ի դեմս փաստաբան Մարիամ Սահակյանի: 2023թ-ի մայիսի 19-ին Ք.Մ.-ն ճանաչվել է տուժող:

Իրավապահ մարմինների կողմից հայտնաբերվել է դեպքին մասնակցող մեղավորներից մեկը:

2025թ.-ի մարտին փաստաբանի կողմից ներկայացվել է միջնորդություն տուժողի և կասկածյալի առերես հարցաքննություն կազմակերպելու մասին, սակայն գործող քննիչի կողմից որոշում է կայացվել միջնորդությունը հետաձգելու՝ գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու նպատակով:Այնուհետև նույն օրը՝ 09.03.2025թ.-ին քննիչի կողմից որոշում է կայացվել միջնորդությունը մերժելու մասին:

[28] https://old.ngngo.net/2023/03/23/atelutyuan-himqov-brnutyun/

ԳԲՏ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

ԳԲՏ անձինք առավել մեծ խնդիրների են բախվում փակ հաստատություններում, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում: Բացի համակարգային մի շարք խնդիրներից՝ ԳԲՏ անձինք բախվում են խնդիրների՝ պայմանավորված իրենց սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ: Հասարակական կարծրատիպերի պատճառով ազատազրկված անձինք ենթարկվում են խարանի և խտրականության, սակայն ԳԲՏ անձինք կրկնակի խտրականության են ենթարկվում և համարվում են խարանված, խտրականացված և անտեսված խումբ քրեակատարողական համակարգում:

Քրեակատարողական հիմնարկներում տարածված քրեական ենթամշակույթը հատուկ է հետսովետական երկրներին, որոնց շարքում է նաև Հայաստանի Հանրապետությունը: Այն իրենից ենթադրում է ՔԿՀ-ում պահվող անձանց աստիճանակարգություն, երբ ամենաբարձր աստիճանին գտնվող անձինք վայելում են ազատազրկված մյուս անձանց և ՔԿՀ-ի աշխատակիցների հարգանքը, իսկ ամենաստորին աստիճանին գտնվողները արժանանում են նվաստացուցիչ և անտեսված վերաբերմունքի: Քրեական հիերարխիայում ամենացածր դիրքն են զբաղեցնում նույնասեռական անձինք: Քրեական ենթամշակույթում «նույնասեռականությունը» կարգավիճակ է, որը կարող է որևէ առնչություն չունենալ անձի սեռական կողմնորոշման հետ, իսկ «նույնասեռական» տերմինը խարան կամ պիտակ է, որով նվաստացնում և պատժում են այնանձանց, ովքեր կատարել են քրեական ենթամշակույթի կանոններով արգելվող կամ անընդունելի որևէ արարք:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող ԳԲՏ և նրանց հավասարեցված անձանց նկատմամբ խտրականությունը կրում է համակարգային բնույթ և դրսևորվում է նրանց կյանքի և իրավունքների իրացման գրեթե բոլոր ոլորտներում, այդ թվում՝

- ☑ **Պահվում են առանձնացված խցերում, որոնք այլ խցերից տաբերվում են իրենց ոչ բարվոք վիճակով**
- ☑ **Կատարում են չվարձատրվող և «պատիվն ու արժանապատվությունը նսեմացնող» աշխատանքներ**
- ☑ **Մնունդը տրամադրվում է առանձնացված՝ մեկանգամյա օգտագործման տարաներով, որպեսզի չխառնվի մյուսների սննդի հետ**
- ☑ **Չեն կարող օգտվել ընդհանուր լոգարանից, լոգանքը կազմակերպում են իրենց խցերում**
- ☑ **Չեն կարող օգտվել ընդհանուր լվացքատնից**
- ☑ **Այլ**

ՔԿՀ-ներում ԳԲՏ անձանց նկատմամբ խտրական մոտեցումները դրսևորվում են ոչ միայն այլ ազատարկված անձանց, նաև ՔԿՀ աշխատակիցների կողմից :

«Դիգնիթի»-ն հանդիսանում է ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամ և իր մանդատի շրջանակներում բարձրաձայնում է առկա խնդիրները և քայլեր ձեռնարկում դրանց լուծման ուղղությամբ:

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿՈՒՄ

Ատելության խոսք՝ hate speech, միջազգային չափորոշիչներով բնութագրվում է որպես ցանկացած հրապարակային արտահայտություն կամ հաղորդագրություն (գրավոր, թվային կամ բանավոր), որը միտված է խտրական վերաբերմունքի, թշնամանքի, նվաստացման կամ բռնության հրահրմանը՝ հիմնված անձի կամ խմբի պաշտպանված հատկանիշներով, այդ թվում՝ սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ: Այդ մոտեցումը ընդունելի է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) պրակտիկայում, որտեղ խոսքի ազատությունը չի կարող գերիշխել այլ անձանց՝ արժանապատվությունից և անհանդուրժողականությունից պաշտպանված լինելու իրավունքների հաշվին:

Հայաստանյան հասարակությունում առկա խտրականության և անհանդուրժողականության ընդհանուր միտումները իրենց արտացոլումն են գտնում նաև թվային միջավայրում: 2025 թվականին սոցիալական ցանցերն ու առցանց հարթակները Հայաստանում շարունակում են կարևոր դեր ունենալ հասարակական կյանքի կազմակերպման, հանրային քննարկումների և կարծիքների ձևավորման գործընթացում՝ միաժամանակ հանդես գալով որպես խտրական խոսքի և ատելության տարածման հիմնական հարթակներից մեկը: Առցանց միջավայրը, լինելով լայն հասանելի և արագ արձագանքող, ոչ միայն արտացոլում է հասարակությունում առկա խտրական վերաբերմունքը, այլև հաճախ նպաստում է դրա խորացմանը: 2025 թվականին արձանագրվել է, որ ատելության խոսքի դրսևորումները պահպանել են իրենց բարձր մակարդակը՝ ի հայտ գալով թե՛ անհատ օգտատերերի, թե՛ լրատվամիջոցների պաշտոնական սոցիալական էջերում և այլ առցանց հարթակներում:

Հայաստանի առցանց միջավայրում խտրականության, անհանդուրժողականության և ատելության խոսքի հիմնական թիրախներից շարունակում են մնալ ԼԳԲՏՔԻ անձինք: Վերջիններիս նկատմամբ ուղղված ատելության խոսքը կրում է պարբերական և համակարգային բնույթ՝ դրսևորվելով վիրավորական և նվաստացնող արտահայտություններով, ինչպես նաև բռնության կամ սոցիալական մեկուսացման բաց կամ անուղղակի կոչերով: Միևնույն ժամանակ, ինչպես ցույց է տալիս 2025 թվականի դիտարկումը, առցանց ատելության խոսքը հաճախ չի սահմանափակվում առանձին անհատների վարքագծով, այլ ուժեղանում է քաղաքական դիսկուրսում ԼԳԲՏՔԻ թեմայի շահարկման միջոցով: Նման քաղաքական մանիպուլյացիաները նպաստում են խտրական խոսքի լեգիտիմացմանը և դրա լայն տարածմանը՝ խորացնելով հասարակական բևեռացումը և մեծացնելով տվյալ խմբի նկատմամբ ուղղված ռիսկերը:

ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱԿՆԱՌՈՒ ՄԻ ՔԱՆԻ ԴԵՊՔԵՐ.

2025թ.-ի փետրվարին համացանցում տարածվել է մի տեսանյութ, որում մեղադրանքներ են հնչել ռազմական գործիչ Կարեն Ջավալյանի հասցեին: Վերջինս այդ մեղադրանքներին արձագանքել է, արձագանքը հրապարակել է Yerkir.am-ը: Կ.Ջավալյանը իր խոսքը ամփոփել է հետևյալ կերպ.

«Ջավակդ շատ կամաչեր, եթե իմանար՝ իր հայրը հայրենիքի սրբությունները պղծողի, համասեռամոլ գոյանքի շինծու գործարքներին է տուրք տվել, ավելին, չի խնայել անգամ պատերազմի հերոսական դրվագներն արատավորել: Ի՞նչ էր ուզածդ, այդպես էլ չհասկացա...»:



Լրատվամիջոցը նյութը հրապարակելիս որպես վերնագիր ընտրել է հետևյալը. Ջավակդ կամաչեր՝ իմանալով, որ իր հայրը համասեռամոլ գոյանքի շինծու գործարքներին է տուրք տվել. լեգենդար Քյոխի պատասխանը[29]:

Տվյալ նյութում «համասեռամոլ» բառի զուգորդումը «գոյանք» ձևակերպման հետ ոչ միայն վիրավորական բնույթ ունի, այլև ուղղված է անձի արժանապատվության համակարգված խաթարմանը՝ սեռական կողմնորոշումը ներկայացնելով որպես անբարոյական կամ անընդունելի երևույթ: Այս ձևակերպմամբ ԼԳԲՏՔԻ անձինք դիտավորյալ ներքաշվում են քաղաքական և հանրային հակասությունների դաշտ՝ որպես բացասական պիտակ, ինչը վկայում է, որ սեռական կողմնորոշումը տվյալ դեպքում չի հանդիսանում փաստական հանգամանք, այլ գործածվում է որպես հռետորական միջոց՝ հանրային վարկաբեկման և ատելության խոսքի տարածման նպատակով:

Նյութը հետագայում վերատպվել է մի շարք այլ լրատվամիջոցների կողմից՝ հիմնականում պահպանելով նույն վերնագիրը կամ կիրառելով լրացումներ, որոնք առավել խորացնում են առկա խտրականությունն ու արժանապատվությունը նսեմացնող շեշտադրումները: Մասնավորապես, iravunk.com կայքը, որը հայտնի է խտրական բովանդակություն տարածելու դեպքերով, նյութը հրապարակել է հետևյալ վերնագրով. **«Ջավակդ շատ կամաչեր, եթե իմանար, որ հայրը համասեռամոլ գոյանքի շինծու գործարքներին է տուրք տվել. Քյոխի ապտակը զազրախոսներին»[30]:**

[29] https://yerkir.am/hy/article/2025/02/12/287128
[30] https://iravunk.com/?p=305182&l=am

2025 թվականի սկզբին մեկնարկած Գյումրու քաղաքապետի ընտրությունների ընթացքում ԼԳԲՏՔԻ անձինք հերթական անգամ հայտնվեցին հանրային և քաղաքական դաշտի թիրախում: «Կոմունիստական կուսակցության» ցուցակը գլխավորող Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանը իր նախընտրական քարոզարշավի ընթացքում անդրադարձել է ԼԳԲՏՔԻ անձանց՝ փորձելով օգտագործել նրանց քաղաքական մանիպուլյացիայի նպատակով: Վերջինս նշել է. «Այս սրբապիղծ ղեկավարության համար ԼԳԲՏ-ն ավելի շատ տեղ ունի, քան հերոսները»[31]:



Գյումրու քաղաքապետի ընտրությունների հաջորդ օրը՝ 2025թ-ին մարտի 31-ին լրագրողների հետ ունեցած ճեպազրույցում անդրադառնալով ԼԳԲՏՔԻ անձանց հնարավոր հանրային միջոցառումների անցկացմանը վերաբերող լրագրողի հարցին, նշել է. **«ԼԳԲՏ-ն չի կարա հայրաքաղաքում շքերթ անի... Դուք էլ, եթե զզվում եք ԼԳՏԲ-ից, եկեք կողքս կանգնեք, դուք տեսեք, թե ես ինչ կանեմ ԼԳՏԲ-ի գլխին»:** Այնուհետև հավելել է, որ եթե հայոց եկեղեցին **«Եվրոպայի պես միասեռականներին ամուսնություն անի, ես բարձրաձայն ասում եմ՝ եկեղեցու մեջ կգնդակահարեմ էդ քահանային, եթե հանկարծ էդպիսի բան անի: Ես բարձրաձայն ասում եմ, էդպես էլ կհանձնվեմ, կասեմ՝ տարեք, ինձ դատեք»[32]:**

2025 թվականի ընթացքում հանրային և առցանց հարթակում արձանագրվել է եկեղեցու շուրջ ձևավորված ինտենսիվ քննարկումների և քննադատությունների ակտիվացում, որոնք պայմանավորված են եղել կառավարության կողմից ձեռնարկված գործողություններով:
Նշված գործընթացները ուղեկցվել են լայն հանրային արձագանքով և ակտիվ քննարկումներով սոցիալական ցանցերում և լրատվական հարթակներում:

[31] https://yerkir.am/hy/article/2025/03/22/289180
[32]http://www.asekose.am/am/post/ekexecou-mej-km-ed-qahanayin--barcracayn-asoum-em-vardan-xoukasyane-lgbt-i-masin

Այդ համատեքստում առցանց միջավայրում արձանագրվել են դեպքեր, երբ ԼԳԲՏՔԻ համայնքը կրկին հայտնվել է թիրախավորման կենտրոնում՝ չնայած քննարկումների բուն առարկայի հետ անմիջական կապի բացակայությանը:

2025 թվականի հոկտեմբերի 17-ին Ֆեյսբուք սոցիալական ցանցի օգտատեր Տեր Սահակ քահանա Գալստյանը ցանցի իր էջում կատարել է հետևյալ գրառումը. **«Կտրիճ Ներսիսյանի հրամանով համասեռամոլ կեղծ եպիսկոպոս Նանարը հավաքում է մասնակիցներ Նիկոլ Փաշինյանի դեմ հանրահավաքի»[33]:**

Նշված հրապարակման բովանդակությունը պարունակում է սեռական կողմնորոշման հիմքով արժանապատվությունը նսեմացնող և վիրավորական ձևակերպում, որը կիրառվել է քաղաքական գործընթացը վարկաբեկելու նպատակով: Սեռական կողմնորոշման վերաբերյալ պիտակավորման օգտագործումը տվյալ համատեքստում նպատակ ունի ձևավորել բացասական և թշնամական վերաբերմունք ԼԳԲՏՔԻ անձանց նկատմամբ, նրանց նույնացնել քաղաքական մանիպուլյացիաների հետ և խթանել խտրական վերաբերմունք ու սոցիալական թշնամանք:

2025թ.-ի հոկտեմբերի 22-ին Ազգային ժողովում հարցուպատասխանի ընթացքում, եկեղեցուն առնչվող հարցերի քննարկման ժամանակ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եկեղեցու և սպասավորների մասով հետևյալ կերպ է արտահայտվել. **«Մեկը բոսյակ է, մեկը սեռական մոլագար... ու մե՞նք ենք եկեղեցու դեմ պայքար տանում: Բոսյա՞կն է եկեղեցին, սեռական մոլագա՞րն է եկեղեցին, գանձագո՞ղն է եկեղեցին, ԿԳԲ-ի գործակա՞լն է եկեղեցին:**

Ես կյանքս կդնեմ դրանցից մեր սրբությունն ազատելու համար»[34]:

Վարչապետի օգտագործած ձևակերպումները ներառում են արժանապատվությունը նսեմացնող և վիրավորական բնորոշումներ, որոնք հնչեցվել են հանրային և քաղաքական բարձր հարթակում: Մասնավորապես, «սեռական մոլագար» արտահայտության կիրառումը կրում է խարանող բնույթ և ընկալվում է որպես սեռականության հետ կապված խարանող խոսք՝ նպաստելով սեռական վարքի կամ ինքնության հետ կապված բացասական ստերեոտիպերի վերարտադրմանը հանրային խոսքում:

Առցանց միջավայրում խտրականության և ատելության խոսքի դրսևորումները ուղղված են ոչ միայն ԼԳԲՏՔԻ անձանց, այլև ԼԳԲՏՔԻ համայնքի հիմնախնդիրներով զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դեմ:

[34] https://www.youtube.com/watch?v=UdQLsmbQhME

Dignity NGO օգտատերը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան - Human Rights Defender of Armenia օգտատիրոջ և ևս 8 անձի հետ է:
17 Մայիս, 2025 թ. ·
ARM | ENG #IDAHOBIT2025
United for Equality, Dignity, and Change in Armenia
Միավ... Տեսնել ավելին

Dignity NGO օգտատիրոջ գրառումը
Դեղինակ
Dignity NGO
@подписчики
35 ավել. Հավանել Պատասխանել 3
Anahit Hakobyan
New Generation Humanitarian NGO ... опять повылазили? Неймется вам? Никак не утихомиритесь?.. Оставьте в покое христианскую страну!!!.. И не навязывайте нам свои НЕтрадиционные нравы!!!.. Не отравля*те нам жизнь своим неуемным желанием все вокруг испога**ть!!!.. ПОБОЙТЕСЬ БОГА, несчастные...
34 ավել. Հավանել Պատասխանել Տեսնել թարգմանությունը


Gerard Martirosyan
Ձեր անասնական գովազդով Ս.....ր եղեք լենտայիցս, այ .....ր
34 ավել. Հավանել Պատասխանել 3
Arthur Aghakaryan
Լու՞րջ: Հիմա ուզում ենք ԵՄ մտնել, հանդուրժողական ենք <<դարձե՛լ>>: Լավն էր:
35 ավել. Հավանել Պատասխանել
Rshtun Martirosyan
Էս հոգեկան հիվանդներն ովքե՞ր են:
34 ավել. Հավանել Պատասխանել
Ernest Mardyan
дзер меч ка пи..ас кам ле..би ?
34 ավել. Հավանել Պատասխանել Տեսնել թարգմանությունը


Nairy Jivanian
You're not welcome in Armenia and in the Armenian culture! LEAVE!
34 ավել. Հավանել Պատասխանել Տեսնել թարգմանությունը
Ramon Jacobson
woke propaganda
34 ավել. Հավանել Պատասխանել Տեսնել թարգմանությունը
Gayane Khachatryan
Ասենք ինչի է իմ մոտ երևում այս այլասեռության գովազդը և պրոպագանդան??????
35 ավել. Հավանել Պատասխանել 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

№ [redacted]
«07» 08 2025թ.

Հասցեն՝ ք. Երևան, Բաբայան 6
Էլ. հասցեն՝ hhzk@mil.am
Հեռ. (010) 20-15-68

[redacted]

ՀՀ պաշտպանության նախարարին հասցեագրված Ձեր դիմումի առնչությամբ հայտնում եմ, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման հավելված 1-ով հաստատված զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի 8-րդ հոդվածով են փորձաքննվում անձի խանգարումները, ինչպես նաև սեռական նույնացման, նախընտրության, զարգացման և կողմնորոշման հետ կապված հոգեբանական և վարքային խանգարումների գերակշիռ մեծամասնությունը: Հարկ է նշել, որ սեռական կողմնորոշման այն ձևերը, որոնք չեն հանդիսանում հոգեկան և վարքային խանգարումներ կամ չեն զուգակցվում դրանցով, խոչընդոտ չեն զինվորական ծառայության համար:

Սեռական նույնացման, նախընտրության, զարգացման և կողմնորոշման հետ կապված հարցերը մեր սոցիալական միջավայրում առաջացնում են առավելապես հարմարվողական վարքի խանգարումներ: ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում Ձեր հետազոտական եզրակացության մեջ առկա նկարագրությունը ևս խոսում է առավելապես հարմարվողական ունակություն-ների խանգարման մասին, որը պայմանավորված է սեռական կողմնորոշմամբ: Ընդ որում Ձեր նախընտրած սոցիալական միջավայրերում՝ աշխատավայր, տարբեր խմբակներ, Ձեր մոտ նկարագրված է հարմարվողական վարք: Հարմարվողական ունակությունների խանգարումները պայմանավորված են միջավայրի փոփոխությամբ, այդ թվում նաև զինված ուժերում, որտեղ անձնակազմի գերակշիռ մասը արական սեռի

2

են և ոչ ավանդակ սեռական կողմնորոշման նկատմամբ վերաբերմունքը դրսևորվում է հաճախ բացասական:

Հարմարվողական ունակությունների խանգարումները փորձաքննվում են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման հավելված 1-ով հաստատված զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի 7-րդ հոդվածի «բ» կետով, որի հիմքով Դուք ճանաչվել եք ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Հարգանքով՝

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂ
գնդապետ Գ. ՄԽԵՅԱՆ

Կատարող՝ ՔԾ Ն.Ջամալյան
Հեռախոս՝ (010)-28-34-96

2025

ՏԱՐԵԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԶԵԿՈՒՅՑ

«Դիգնիթի» Մարդասիրական ՀԿ-ն (ԴԻԳՆԻԹԻ)
ոչ առևտրային հասարակական կազմակերպություն է,
որը հիմնադրվել է 1998թ.-ին Հայաստանում:
ՀԿ-ի առաքելությունն է նպաստել ներառական,
իրավահավասար հասարակության ձևավորմանը՝
մարդու իրավունքների պաշտպանության, հասանելի
առողջապահական ծառայությունների,
կարողությունների զարգացման և սոցիալական
աջակցության միջոցով:

contact@ngngo.net
www.ngngo.net

+374 60478989
+374 55478980

© 2026. The report was published by Dignity Humanitarian NGO
© 2026. Designed by Dignity Humanitarian NGO